

# ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



**«Դրօշակի» այս համարը նվիրվում է  
ՀՀԴ երիտասարդական կառույցներին**

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(77-րդ տարի) Թիվ-8 (1678)

Օգոստոս 2023

# Բովանդակություն



«Դրոշակ» ամսաթերթ  
Հայ Յեղափոխական Դաշնակցության  
պաշտոնաթերթ  
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմության թանգարան  
հիմնադրամ»  
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1  
Հեռ. (+374) 10-52-18-90  
Էլ. հասցե՝ droshak@arf.am  
Կայք՝ <https://www.droshak.am>  
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան  
Խմբագրական խորհուրդ



## 1- Առաջնորդող

Պատմական պատասխանատու սերունդ (Էջ 1-2)

## 2- Գաղափարական

### Յովսեփ Տեր-Գեորգեան

Դիմադրող հակահոսանքի ձեւաւորման  
արժեքային հիմքերը (Էջ 3-4)

## 3- Երիտասարդական

### Արշակ Մետրոպեան

Դաշնակցական երիտասարդութիւնը  
ազատագրական պայքարի ճամբով (Էջ 5-6)

### Անահիտ Դանիելյան

ՀՅԴ ԱՈՒՄ. պատմական առաքելություն (Էջ 7-8)

### Սևակ Նազարեան

ՀՅԴ ՀԵՄ-ը ազգային պայքարի կիզակետում  
(Էջ 9-10)

### Մարիա Գաբրիելեան

Արդեօք կարելո՞ր են պատանեկան միութիւնները  
(Էջ 11-14)

### Եղիա Թաշճեան

Հայ ուսանողութեան մասնագիտական ներուժը՝  
հայրենիքի համար (Էջ 15-17)

## 4- Հայրենի եզերք

### Տաթևիկ Աղաջանյան

Հնարավոր չէ այլ վայրում գտնել այն  
երջանկությունը, որը զգում ենք՝ մեր հողի վրա  
ապրելով (Էջ 18-19)

## 5- Հարցազրույց

### «Դրոշակի» հարցազրույցը Լեռնիկ Յովհաննիսյանի հետ

Կարևոր է ազգային արժեքային կողմնորոշման  
ամրապնդումը երիտասարդության շրջանում  
(Էջ 20-21)

## 6 - Հայրենիք-Սփյուռք

### Դուկո. Գեորգ Յակոբճեան

Հայաստան-Սփիւռք երիտասարդական  
յարաբերութիւններ (Էջ 22-24)

## 7- Քաղաքական

### Դուկո. Գեորգ Յակոբճեան

Հ.Յ.Դ. երիտասարդականի արտաքին  
յարաբերական գործունեութիւն (Էջ 25-26)

## 8- Դաշնակցական բեմ

### Յողիկ Աշրգեան

Հայ երիտասարդը՝ Դաշնակցութեան գալով  
(Էջ 27-29)

## 9- Պատմության լուսարձակ

### Տիգրան Ծինպաշեան

Հ.Յ.Դ. ուսանողական միութիւններու ծննդոցը  
(Էջ 30-34)

## 10- Ժառանգություն

### Սարգիս Չէյթեան

Ամբողջական Յանձնառութիւն (Էջ 35-36)

## Պատմական պատասխանատու սերունդ

Ուզում ես գուշակել մի երկրի ապագան, նայիր նրա երիտասարդությանը:

Գարեգին Նժդեհ

Երիտասարդության դերի վերաբերյալ Գարեգին Նժդեհի գնահատականը կարելի է համարել անքննելի ճշմարտություն, ավելին, սխալ չի լինի ավելացնել, որ ինչպիսին որևէ երկրի երիտասարդությունն է, այնպիսին է և նրա ներկան: Մենք դրա վկան ենք եղել անցած 35 տարիների ընթացքում: 1988 թ. սկսված ազգային զարթոնքը երազանքից իրականության վերածող առաջատար ուժը հենց օրվա երիտասարդությունն էր:

1988 թվականի փետրվարի տասնութին ուսանողական կուռ շարքերով և որպես ազգային գիտակցության կրող անհատներ, խոնավելով Երևանի Ազատության հրապարակում, այս երիտասարդությունը ավելի քան երկու տարի եղավ պայքարի առաջին գծում, այնուհետև նրա մեկ հատվածը խաղաղ հրապարակներից փոխադրվեց Արցախի ու Հայաստանի սահմաններ և ապահովեց Արցախի ազատագրումը, Արցախի և Հայաստանի Հանրապետությունների անկախացումն ու հայոց երկու պետականությունների ձևավորումն ու կայացումը: Այս սերունդը հոգևոր իմաստով ծնունդն էր ազգային այն հզոր վերագարթոնքի, որը հայրենի հողի վրա սկսվեց անցած դարի 60-ականներին և իր քուրայում պողպատի պես կոփեց հայրենանվեր ու պահանջատեր տեսակի: Ցավոք, ձեռք բերված ազատությանն ու անկախությանը հետևեցին ազգային դպրոցի և գիտության աղավաղումն ու քայքայումը՝ այս անգամ արտաքին փափուկ ուժի ներգործությամբ: Խորհրդային գաղափարախոսության մերժման հետ մերժվեց նաև ազգային տեսլականների և արժեհամակարգի հիմքի վրա գաղափարների (եթե ոչ գաղափարախոսության) ներդրումը հասարակական գիտակցության և, մասնավորապես, աճող սերնդի դաստիարակության հիմքում: Այն, ինչ մերժվեց տգետ ղեկավարության կողմից, որպես ազգայնական ուժերի չափազանցված մտայնություն, բնավ չառաջացրեց քարացած վակուում. դատարկված տեղը գրավեցին արտածին, ապազգային և հակազգային այլասերիչ հոսանքները: Մինչ իշխանությունները շարունակում էին քաղաքական «տուն-տունիկ» խաղալ օտար հոսանքների ու կազմակերպությունների մտորում ձևավորված երիտասարդության հետ, այդ երիտասարդությունը աճելով՝ նախ խորտակեց այդ ինքնավստահ ու թվացյալ ճարպիկ իշխանությանը, ապա խորտակեց Արցախը և շարունակում է Հայաստանի ինքնիշխանության ոչնչացման ծրագիրը: Ահա երիտասարդության երկու սերունդ, որոնցից առաջինը կարողացավ փշրել խորհրդային կապանքներն ու ինքնագոհաբերության գնով հող ազատագրել ու



երկիր անկախացնել և նրան հաջորդած սերնդի մի հատված, որը կեղծ խոստումներով զավթելով իշխանությունը՝ ոչ միայն ազգային ու պետական ձեռքբերումներից շատերը մսխեց, այլև շարունակելով օտար ուժերին ծառայությունը՝ ներսից քանդում է ազգային-պետական կառույցները, հայոց հոգևոր ինքնությունն ու վերջինիս հոգևոր-մշակութային և պատմական կովանները՝ կրթության և գիտության համակարգերը: Ակնհայտ է, որ այս դավադրությունը իրականացնողները, առավել ևս ծրագրողները հրաշալի գիտեն, թե որն է հասարակությունների գլխավոր շարժիչ ուժը, որոնք են այդ ուժի մտավոր և հոգևոր հիմնասյունները: Ի դեպ, պատահական չէ, որ պետություններ և պետական համակարգեր խորտակված վերջին տասնամյակների գունավոր հեղափոխությունների վարակը կրող ուժը երիտասարդությունն էր, իսկ նրա գործածած ավերիչ զենքը վերագային գլոբալիստական գաղափարախոսություններն էին:

Վերադառնալով անցող երեք և կես տասնամյակների մեր իրականությանը՝ պետք է փաստենք, որ ճակատագրական փոթորիկների մեջ հայոց երկրի հավատարիմ ու հետևողական զինվորների շարքում էր դաշնակցական երիտասարդությունը: Բնավ չնսեմացնելով հայրենիքին անսակարկ ծառայած և ծառայող այլ հայորդիների դերն ու վաստակը՝ կարծում եմ՝ իրավունք ունենք մատնանշելու, որ նրանց շարքերում կազմակերպորեն կուռ, գաղափարապես համակարգված և ծրագրային առումով հետևողական դիրքերում է եղել Դաշնակցության դրոշի ներքո ինքնադրսևորված հայ երիտասարդությունը՝ իր միասնական կառույցներով և աշխարհատարած թևերով: Այդ երիտասարդությունն իր մարտական կոփվածքը ստացավ Արցախի ու Հայաստանի սահմանների պաշտպանության ժամանակ, որպես յուրատեսակ կամավորական բանակ և զենքը ձեռքն առավ հետագա բոլոր ռազմական փորձությունների ժամանակ:

Այնուամենայնիվ սխալ կլինի միայն այս տեսանկյունից դիտարկել և գնահատել Դաշնակցության երիտասարդության դերակատարությունը՝ Հայաստանի անկախացման ու Արցախի ազատագրման շրջանից սկսած: Որպես ազգային և սոցիալիստական կուսակցության անդամներ՝ դաշնակցական երիտասարդները իրենց կուսակցական մկրտության օրերից պայքարի մեջ եղան Հայաստանի ժողովրդավարացման, հայ ժողովրդի ներքին ազատությունների և սոցիալական-իրավական համակարգի կայացման համար: Այսօր էլ այդ երիտասարդությունը սպասում է պայքարի կոչի, և ոչ մի կասկած չկա, որ նա լինելու է Հայաստանը հակազգային և դավաճանական ռեժիմից ազատագրողների, Արցախը շրջափակող շղթաները փշրողների առաջին շարքում: Եթե ինչ-որ մեկը կմտածի, թե սա փորձ է ներկայացնելու ներկա հայ հասարակությանը մաս կազմող ինչ-որ արտասովոր շերտի, ասենք, որ այդպիսի հավակնտություն, չափազանցություն կամ գաղտնիք չկա ներկայացվածի մեջ: Պարզապես այս երիտասարդությունը գաղափարապես դաստիարակվել և մկրտվել է ազգային գաղափարախոսության ավագանում: Նախ այդ ավագան մտել են նրանք, ովքեր եղել են հայրենասիրության «կրոնի» հավատացյալները և ապա անցել են գաղափարաքաղաքական դաստիարակության դպրոց: Եվ այս օրինակը լավագույն վկայություններից է այն ճշմարտության, որ մեր Արցախ-Հայաստան երկիրը կարող է փրկվել ու վերածնվել, եթե մենք կրթկին վերադառնանք մեր հոգևոր-մշակութային արմատներին, մեր ազգային ինքնությանը, որը հազարամյա կաղնու պես ժամանակներին ներդաշնակ փոխում է իր տերևներն ու սաղարթը, սակայն շարունակում է սնվել միմիայն սեփական արմատներից, այդ արմատներով ամուր կառչած է հայրենի հողից և բաց չի թողնելու այդ հողը, որքան էլ օտարատուն ազգադավները ձգտեն ճյուղակոտոր անել ծառը, ներարկել նրան օտարի թույնը և թուլացնելով՝ ոչնչացնել ծառի արմատները:



ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1999 թվականի որոշմամբ՝ օգոստոսի 12-ը հռչակվել է Երիտասարդության միջազգային օր: Այս օրվա նպատակն է հիշեցնել և շեշտել աշխարհի զարգացման և կառուցման գործում երիտասարդների դերի, ինչպես նաև նրանց առջև ծառայած ամենօրյա խնդիրների մասին: Կասկած չկա, որ հայ երիտասարդությունը, լինելով համաշխարհային երիտասարդության մասը, պետք է իր ներդրումն ունենա աշխարհի առաջադեմ երիտասարդության պայքարում՝ հանուն համընդհանուր խաղաղության, բարեկեցության, ազգային ու մարդկային իրավունքների, բնապահպանական խնդիրների և ընդդեմ համաշխարհային համահարթեցման ու երիտասարդության ապագաղափարայնացման, ընդդեմ ցեղասպանությունների և ահաբեկչության, ընդդեմ աշխարհի գերուժերի դավադիր ծրագրերի՝ օգտագործելու երիտասարդության ներուժը ավանդական հասարակությունների ու արժեքների քայքայման ու այլաբանման, սեփական էթնիկ ինքնության և այլ հիմնարար արժեքների մերժման նպատակով: Այո, ինչպես հազարամյակներ շարունակ եղել է հայ ժողովուրդը, այնպես էլ այսօրվա նրա երիտասարդությունը պետք է լինի համաշխարհային քաղաքակրթության կրողն ու ջահակիրը, բայց չմոռանա, որ այդ ամենից առաջ նա ծնունդը և կրողն է հինավուրց ու յուրատիպ հայ ինքնության, որ պատմական պատասխանատվություն է կրում այդ ինքնության, հայոց աստվածաշնչյան երկրի և պետության գոյատևման, նրա նոր վերածննդի և հզորացման համար: Պատմական պատասխանատվության զգացումը մարդու և հավաքականությունների բարոյական արժեքահամակարգի առանցքային սյունն է, և նրանով է չափվում մնացած ամեն ինչ: Իսկ պատմական պատասխանատվությամբ օժտված սերունդ ունենալու համար նախ անհրաժեշտ է սերունդներին կրթել ու դաստիարակել այդպիսին:

Այդ ճանապարհով և այդ դեպքում միայն մենք կարող ենք հանգիստ լինել հայ ազգի, հայոց երկրի և պետականության շարունակականության համար: ■



# Դիմադրող հակահոսանքի ձեւաորման արժեքային հիմքերը

Յովսէփ Տէր-Գեորգեան  
Հ.Յ.Դ. Բիրոյի անդամ, երիտասարդական հարցերու պատասխանատու

Ճգնաժամային օրեր կ'ապրի հայութիւնը, արցախահայութեան կը սպառնայ ցեղասպանութեան վտանգ, Հայաստանի ազգադաւ իշխանութիւնները մոլեգնաբար կը կործանեն հայկական պետականութիւնը և ազգային ինքնութեան հիմնասիւնները: Իշխող վարչախումբը միտումնաւոր կերպով պարտոտողականութիւն, անտարբերութիւն, պառակտուածութիւն և անգործութիւն կը տարածէ հայութեան լայն խաւերուն մէջ: Հայ ժողովուրդը բնաջնջել ուզող թշնամիներուն հետ խաղաղ յարաբերութիւններ հաստատելու անհրատեսական քաղաքականութեան անուան տակ Հայաստանը թրքական վիլայէթի վերածելու առաջին քայլերը կ'անուուին:



Արտաքին մակարդակի վրայ միայնակ կը դիմագրաւենք աշխարհաքաղաքական փոթորկալից պայմաններուն՝ առանց իրական դաշնակիցներու: Տարածաշրջանի մնացեալ պետութիւնները, բնականաբար, կը հետապնդեն բացառապէս իրենց շահերը, իսկ Հայաստանի կառավարութիւնը կը դիմէ այնպիսի քայլերու, որոնք կը մեկուսացնեն Հայաստանը որպէս պետութիւն և զինք կը դարձնեն օտար ուժերու շահերը սպասարկող ենթակայի:

օրերուն: Յատկապէս հայ երիտասարդութիւնը պէտք է յստակ գիտնայ՝ յուսահատութիւնը մահացու մեղք է և թաւալգոր սկիզբն է բոլոր ձախողութիւններուն:

Այս կացութեան մէջ ազգի առողջ ուժերը ճարտասառ կը թուին ըլլալ, անոնք առ այսօր չեն յաջողիր համախմբելու հայութիւնը փրկութեան ծրագրի մը և անոր համապատասխան ղեկավարութեան մը շուրջ: Անորոշութիւնը համատարած երևոյթի վերածուած է և նոյնիսկ կրնայ թուիլ, թէ չարական ուժերը կ'ուղղուին դէպի յաղթանակ՝ առանց հզօր դիմադրութեան բախտելու:

- **Յեղափոխականութիւն:** Ազգային գործով զբաղող ղեկավարութենէն և շարքային միութենական երիտասարդէն կը պահանջուին յանդուգն ու համարձակ քայլեր: Յեղափոխական մօտեցումը չի նշանակեր արկածախնդրութիւն, այլ ներկայ պայմանները նկատի առնելով՝ կ'ենթադրէ այնպիսի ծրագիրներ, որոնք կը խառնեն խաղաքարտերը և հայութեան կը վերածեն ինքնուրոյն ղերակատարի: Նոր խնդիրներու հնաոճ վերլուծումները, նախկին գործելակերպերու ընդօրինակութիւնը, քննական մտքի բացակայութիւնը կրնան ականայ պահպանողական գործելաոճի, ճակատագրական սխալներու և կամ ապարդիւն ամբողջական մղել: Յեղափոխական միտքը և գործելաոճը անհրաժեշտութիւն է շրջելու համար այս իրավիճակը:

Այսպիսի օրհասական օրերուն հասած ենք այն հանգրուանին, որ ելքեր գտնելու և ծրագիրներ իրագործելու համար անհրաժեշտ է որդեգրել յստակ ուղենիշեր և տածել հետևեալ արժէքներն ու դարձնել սկզբունքներ:

- **Ձոնողութեան գիտակցութիւն:** Մեր հայրե-

- **Հաւատք:** Հայութեան լայն խաւերու և նոյնիսկ որոշ ղեկավարութեանց մօտ կորսուած է կարծես հաւատքը, այն համոզումը, որ կարելի է դուրս գալ այս դաժան փակուղիէն և պահպանել Արցախը հայկական, ազատագրել Հաղորոյն ու Շուշին և գրավեալ հայրենի միւս հողերը ու ազգային հիմքերու վրայ կերտել հայրենի պետականութիւն: Ո՛չ, ամէն ինչ կորսուած չ'է, հայ ժողովուրդը իր պատմութեան մէջ ապրած է նման օրհասական օրեր և կրցած է պատուով դուրս գալ. լիզպոնեան խենթերու ինքնավստահութիւնն ու հաւատքն է, որ անհրաժեշտ է մեզ այս



## Գաղափարական

նիքը մշտական յարձակումի ենթակայ է, դիմադրելն ու գրառուածը ազատագրելն առանց զոհողութեան անկարելի է: Անշուշտ, դժուար է ընդունիլ այս իրականութիւնը, Հայաստանի իշխանութիւնները ամբոխավարական ձևով ճիշդ հակառակ քարոզչութիւնը կը տանին. հանգիստ և խաղաղ կեղծ ապագայի մը մասին խօսելով՝ կը ջանան ջլատել ազգի պայքարող ոգին: Քաղքենիացած և «անտարբերութեան» քնեցնող արբեցութեան հոգեվիճակէն պէտք է անյապաղ դուրս գալ և ազգովին պատրաստ ըլլալ յարատև կռուի և այդ ճամբուն վրայ զոհողութիւններ կատարելու: Մարտունակ, քաջ ու հայրենիքի համար զոհողութեան պատրաստ հայու տիպարը պէտք է վերակենդանացնել:

- **Գործ:** Ներկայ պայմաններուն մէջ տագնապիլը բարարար չէ, վերլուծելը և սխալները մատնանշելը՝ նոյնպէս: Դիմատետրի գրառումներ և ճառեր արտասանելը ազդեցութիւն ունենալու ուժ չունի: Պէտք է բոլորս համոզուինք, որ չկան հրաշք լուծումներ, այլ ծրագրուած, հետևողական, տքնաջան և անշահախնդիր իսկական գործն է, որ պիտի առաջնորդէ մեզ դէպի արժանապատիւ ապագայ: Գործ անխտիր ամէն ոլորտի մէջ, որպէսզի ունենանք հզօր բանակ, գիտակից հայութիւն, մարտունակ երիտասարդութիւն, ամուր սահմաններ, կազմակերպուած Սփիւռք, միջազգային նեցուկ մեր պահանջներուն և... Մեր ազգային խոհանարակը կենսագործենք: Հայութեան ներկայ իրավիճակը կը յատկանշուի չափազանց քննադատութիւններու՝ խօսքի տարափի ժամանակաշրջան մը ըլլալով, մինչդէռ հակառակը կը պահանջուի բոլորէս՝ աշխատանք: Ընելիքները շատ են և ակներև, չքուպասենք մէկս միսին, նախաձեռնենք և իրագործենք:

- **Միասնականութիւն:** Օգոստոս ամսուն ընթացքին Արցախի մէջ տեղի ունեցած ներքին անկայունութեան դրսևորումները ցոյց կու տան միասնականութեան անհրաժեշտութիւնը՝ ներքին ամրութեան

ի խնդիր. միասնականութիւնը կը պահանջէ յարգանք բոլորին նկատմամբ, այլ կարծիքներու ընդունում և որոշ փոխզիջումներ առողջ ուժերու միջև: Միասնականութիւնը հնարաւոր է առողջ ուժերու միջև միայն: Արցախը յանձնողներու և Արցախը հայկական պահելու համար պայքարող ուժերու միջև միասնականութիւնն անկարելի է, և կ'արժեզրկէ ազգային միասնութեան գաղափարն ամբողջութեամբ:

Երկարաժամկետ առումով վերը նշուած ուղենիշները և պայքարելու կամքն ու վճռականութիւնն են, որ կը ստեղծեն տնտեսական և զինուորական հնարաւորութիւններ և ժամանակաւոր պարտութիւններու էջերը կը դարձնեն մշտական յաղթանակներու:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան երիտասարդութիւնն իր բազմահազար անդամներու ամենօրեայ պայքարով կը ջանայ մարմնացնել այս սկզբունքները՝ վկայ Արցախի, Հայաստանի ու յատկապէս Սիւնիքի և Սփիւռքի տարածքին ծաւալած իր բազմաբնոյթ ծրագիրները, իր անդամներու մուտքի արգելումը հայրենիք, երիտասարդ ընկերներու դէմ կատարուած բռնաճնշումներն ու բանտարկութիւնները, վկայ 44-օրեայ պատերազմին նահատակուած դաշնակցական երիտասարդները...

Մեր իրականութենէն ելլելով՝ շրջելու համար հայութեան այս իրավիճակը, անկմանը դիմակայող հակահոսանք առաջացնելու համար հայ երիտասարդութեան համախմբումը վերոնշեալ արժեքներուն շուրջ կը հանդիսանայ առաջնահերթ հրամայական:

*Յ.Գ.: Յօդուածը գրուած է Հ.Յ.Դ. պաշտօնաթերթ «Դրօշակի» երիտասարդութեան նուիրուած յարուկ թիւին համար, Օգոստոս 2023 թ.: ■*



# Դաշնակցական երիտասարդությունը ազատագրական պայքարի ճամբով

Արշակ Մեսրոպեան  
Հ.Յ.Դ. Բյուրոյի երիտասարդական գրասենեակի պատասխանատու

Հայ Յեղափոխական Դաշնակցությունն իր ստեղծման տարիներէն ի վեր ունեցած է աշակերտական և ուսանողական միաւորներ, որոնց մէջ հայ յեղափոխաշունչ երիտասարդութիւնը թրծուած է ազգային ազատագրական գործին մէջ և առաջ տարած է հայկական խնդրի լուծման համար լայնածաւալ գործունէութիւն պատմական տարբեր պայմաններու և իրավիճակներու մէջ: Սփիւռքի տարածքին Հայոց ցեղասպանութեան յաջորդող տասնամեակներուն կազմաւորուած երիտասարդական ուխտերը, աշակերտական միութիւնները և ուսանողական խմբակները յետագային վերածուեցան ամրակոտ միութիւններու, որոնք կը շարունակեն գործել նոյն ճանապարհով:

Հ.Յ.Դ. աշխարհասփիւռ երիտասարդական, ուսանողական և պատանեկան միութիւնները ներկայիս կը գործեն աւելի քան 20 տարբեր շրջաններու և երկիրներու մէջ: Համահայկական այս ցանցին աշխատանքները համակարգելու և համադրելու նպատակով կը գործէ Հ.Յ.Դ. Բյուրոյի երիտասարդական գրասենեակը, որուն հիմնական գործառոյթն է դաշնակցական երիտասարդականի հայեցակարգի և ռազմավարութեան մշակումը, որ կը ճշդէ Հ.Յ.Դ. երիտասարդականի ուղղութիւնը և առաջնահերթութիւնները և սոյն ուրուագիծէն ներս ընդհանրական ծրագիրները:

Հայկական իրականութեան մէջ Հ.Յ.Դ. երիտասարդական համահայկական կազմակերպուած ցանցն իր ազդեցութեան գօտին կ'ընդլայնէ երկու հիմնական մակարդակներու վրայ՝ ներազգային կազմակերպական և արտաքին յարաբերական:

Ներազգային իմաստով հայրենիքէն ներս և կամ սփիւռքեան տարբեր գաղութներու մէջ Հ.Յ.Դ. երիտասարդական միաւորները և միութենական անդամները կը հանդիսանան ներկայացուցիչներ և դեսպաններ, որոնք կը պաշտպանեն ազգային-պետական շահերը և նկարագիրը, ինչպէս նաև մեր հարազատ ժողովուրդի զօրակներուն մօտ կը ձևաւորեն հանրային առողջ կարծիք, կ'իրազեկեն օրուայ կենսական նշանակութիւն ունեցող հարցերուն և մարտահրաւերներուն մասին և առիթներ կը ստեղծեն այդ խնդիրներուն շուրջ ստանձնելիք հաւաքական յանձնառութեանց վերաբերեալ:

Իսկ արտաքին ճակատին վրայ, մասնաւորաբար սփիւռքի մէջ իւրաքանչիւր միութիւն իր շրջանէն ներս կը բարձրաձայնէ և կը ներկայացնէ հայ ազգի դիմագրաւած հիմնախնդիրները տուեալ երկրի հասարակութեան լայն շերտերու և պատկան մարմիններու մօտ: Այսպիսով՝ միջազգային մակարդակի վրայ կը ջանայ ստեղծել հայանպաստ մթնոլորտ և տրամադրութիւններ:

Ազգային կեանքի կազմակերպման գործին մէջ Հ.Յ.Դ. երիտասարդականի համահայկական ցանցն



ունի իր ուրոյն դերակատարութիւնը: Առաջադրանք ունի առհասարակ հայութեան և յատկապէս հայ երիտասարդութեան ներուժը կուտակելու և յստակ ու ճշդուած գործի ուղղելու՝ համազգային նպատակներու իրականացման ի խնդիր:

Հ.Յ.Դ. երիտասարդականը, Արցախի, Հայաստանի և սփիւռքեան ցանցով բոլոր հնարաւոր միջոցներով 2020 թ. յանձնատուր պայմանագրի ստորագրութենէն մինչև այսօր անդով կը պայքարի ներկայ իշխանութեանց դէմ և կը շարունակէ պաշտպանել Արցախի մեր հայրենակիցներուն ինքնորոշման իրատուիքը: Մեր ցանցը կը գործէ ապակեղոն, բայց ունի յստակ գաղափարական և ռազմավարական կեղոնացում, որ երաշխաւորն է մեր գործունէութեան արդիւնաւէտութեան:

Հ.Յ.Դ. երիտասարդական և ուսանողական միութիւնները հիմք ունենալով նոյնիսկ այդ ռազմավարական ուղղութիւնները՝ մասնաւորաբար Արցախեան 44 օրեայ պատերազմէն ետք գործունէութեան հիմնական կիզակէտ դարձուցին Արցախի Հանրապետութիւնը և վտանգուած ՀՀ Սիւնիքի մարզը:

Արցախի համապարփակ ծրագիրը համախմբեց Դաշնակցութեան համահայկական երիտասարդական ներուժը և կեղոնացուց Արցախի վերականգնման աշխատանքներուն վրայ: Պատերազմէն ետք Հ.Յ.Դ. երիտասարդները առաջինն էին, որ իրենց ֆիզիքական ներկայութեամբ արցախահայութեան կողքին եղան, ճիշդ, ինչպէս պատերազմի ժամանակ մարտի ճակատի խրամատներուն մէջ էին: Արցախի համար ուժերու լարումը և երիտասարդական ու ուսանողական միութիւններու ներուժի և միջոցներու կուտակումը առաջնային են առ այսօր, սակայն պարտադրուած շրջափակումը կ'արգիլէ հարիւրաւոր երիտասարդներու գործնական ներկայութիւնը Արցախ, որոնք ամէնամեայ դրութեամբ հոն կ'ըլլային տարատեսակ ծրագիրներ իրականացնելու համար:

Հայկական հարցը թաղել ուզող ՀՀ ներկայ իշ-



խանաւորները և անոնց վարած պետականակործան և ապագային քաղաքականութեան հետևանքները վտանգած են Մայր Հայաստանն ամբողջութեամբ, Մինիքի մարզին առաւելաբար կը սպառնան պանթորքական ախորժակները, որոնք նպատակ ունին հայրութեան ոչնչացումը: Դաշնակցական երիտասարդութիւնը գործօն դիմադրութիւն ցուցաբերելով այս ընթացքին՝ իր ներկայութիւնը գօտեպնդեց Մինիքի մէջ՝ մնայուն գործիչի ճամբով և լծուեցաւ տեղական կառոյցներու ամրապնդման աշխատանքին: Հ.Յ.Դ. Հ.Ե.Մ.-ի հետ համագործակցաբար Հ.Յ.Դ. աշխարհասփիռ երիտասարդական մարդուժը համախմբուեցաւ՝ գործուղումներու, երիտասարդական տարատեսակ միջոցառումներու շուրջ և հետևողական ու նպատակային կերպով Մինիքը դարձուց առաջատար օրակարգ մեր աշխարհացրի ընկերներուն համար՝ թափ տալով «Դէպի Երկիր» կարգախօսի գործնական դրսևորումներուն:

Ի մասնաւորի Արցախի մէջ յետպատերազմեան անկումային տրամադրութիւնները երիտասարդութեան մատնած էր յուսալքութեան և արտագաղթի միտումներու: Գիտակից ըլլալով, որ ընկերային և տնտեսական բարօրութիւնն ու կայունութիւնը հիմնական գրաւականներէն են Արցախի հայաթափման դէմ պայքարում, երիտասարդական գրասենեակը «Վերելք» ծրագիրը իրականացուց, որուն հիմնական նպատակն է ձեռներէց երիտասարդներուն նեցուկ կանգնիլ՝ իրականութիւն դարձնելու համար իրենց պիզնես գաղափարները և այսպիսով նպաստելու թէ՛ իրենց անհատական աճին և թէ՛ Արցախի զարգացման գործին: Նմանատիպ հիմնաւորումներով և 2021 թ. Արցախի մէջ արձանագրած յաջողութեան պատճառով Մինիքի մէջ ծրագիրը ևս կայացաւ 2022 թ.: «Վերելք»-ը այն եզակի նախաձեռնութիւններէն է, որ դիմորդ երիտասարդներուն առաջին հերթին կը տրամադրէ բաւականաչափ գիտելիքներ՝ կայուն հիմքի վրայ կառուցելու իրենց ապագայ ձեռնարկատիրութիւնը և առաջնային կը համարէ երիտասարդութեան նեցուկ հանդիսանալը, բայց ոչ բարեգործութեամբ, այլ գործունեութեան խթանմամբ, այդ իսկ պատճառով տրամադրուող յատկացումները առանց տոկոսի վարկեր ձևակերպուած են: «Վերելք»-ին ճամբով հնարաւոր է ստեղծել համակարգ մը՝ ընկերային և տնտեսական

զարգացում ապահովող՝ երիտասարդութեան դերակատարութեան բարձրացման հեռանկար ունենալով և երկարաժամկետ կտրուածքով Արցախի ու Հայաստանի մէջ փոքր և միջին ձեռնարկատիրութիւններու միջավայրի մը ստեղծման նպաստելու համար:

Այս հիմնական ծրագիրները, որոնք նշեցինք, վերնագիրներն են գործունեութեան շղթայական բնոյթ կրող փոքր և ոչ այդքան փոքր աշխատանքներու, որոնք Հ.Յ.Դ. երիտասարդականը կ'իրականացնէ մեր հայրենիքի անվտանգութեան դիտանկիւնէն ռազմավարական նշանակութիւն ունեցող շրջաններու մէջ: Մեր ընդհանուր աշխատանքի սահմանումները լայն են՝ արտաքին յարաբերական գործունեութենէն մինչև դաստիարակչական սեմինարներու կազմակերպում, բողոքի ցոյցերէ ու երթերէ մինչև պատանիներու ակոյեանութիւններ և վարիչներու վերապատրաստման դասընթացներ: Համահայկական համագումարներ և ուսանողական ուսումնասիրական մրցանքներ: Բնագաւառները բազմաթիւ են, և մասնակիցները՝ այլազան, նպատակը մէկն է՝ հայ երիտասարդներ, պատանիներ և ուսանողներ համախմբել Դաշնակցութեան դրօշի տակ և ազգավայել գործերու շուրջ:

Հ.Յ.Դ. երիտասարդականը պատուով ստանձնած է ազգային-ազատագրական պայքարը նորոգելու յանձնառութիւնը: Առաջին հերթին արդիականանալով՝ ձեռք բերել հմտութիւններ անհրաժեշտ ոլորտներուն մէջ, գաղափարականաւ, յեղափոխական մտածելակերպով և գործնական դրսևորումներով մարտունակ երիտասարդական կորիզ դառնալ: Այսպիսի երիտասարդութիւնն է, որուն շուրջ համախմբուելով՝ քաղաքական, յարաբերական և դիւանագիտական աշխատանքները կ'արդիւնաւորուին: Հայ դատը իր հանգրուաններով և հիմնահարցերով կը պահանջէ մեզմէ պատրաստ ըլլալ՝ իրական պայքար մղելու և մեր ժողովուրդի անժամանցելի իրաւունքները պաշտպանելու բոլոր ճակատներուն վրայ:

Մեր աշխարհագրութիւնը ցիր ու ցան է, բայց մեր գաղափարական հենքը կ'արմատանայ հայկական բարձրաւանդակին վրայ: Մեր ցանցը ընդարձակ է, բազմահազարանոց, կարգապահ և նպատակաւայաց: Այն խոչընդոտները, որոնք այսօր մեր արդար երթին կը բախտին, պիտի ընկրկին մեր ուժականութեան և յամառութեան դիմաց: Քանի որ կայ կամք, գործին ատակ և պատրաստուած մարդուժ, նպատակի նկատմամբ հաւատք և նուիրում, համախմբուածութիւն և ծրագիր. ոչ մէկ բան, ոչ մէկ իշխանութիւն, ուժ կամ նոյնիսկ պարտադրուած աշխարհակարգ կրնայ խանգարել մեր ընթացքը: Հ.Յ.Դ. երիտասարդականի պայքարը մեր ամբողջական իրաւունքներուն համար, մեր ինքնորոշման և ինքիշխանութեան պահպանման ի խնդիր՝ յարատև կռուի նշանաբանով կ'առաջնորդուի, նոյն անոր հեղինակ Քրիստափորեան նուիրումով: Հայաստանի, Արցախի և Սփիւռքի որևէ անկիւն Դաշնակցութեան գաղափարի շուրջ հաւաքուած երիտասարդութիւնը և ուսանողութիւնը դիմադրութեան կորիզներ են՝ ընդդէմ կեղեքողներու և բռնակալներու, օտար ըլլան անոնք, թէ՛ հայ: ■



## ՀՅԴ ՆԱՌԻՄ. պատմական առաքելություն

Անահիտ Դանիելյան

ՀՅԴ ՆԱՌԻՄ կենտրոնական վարչության անդամ

Դեռևս Խորհրդային Միության տարիներին, հակառակ բոլոր դժվարություններին, սովորելու նպատակով Մերձավոր Արևելքի երկրներից Հայաստան եկած և այստեղ հաստատված բազմաթիվ դաշնակցական ուսանողներ կային, որոնք հիմնականում իրար չէին ճանաչում և չէին բացահայտում իրենց դաշնակցական լինելը:

1990 թ. սկզբից՝ Դաշնակցության ընդհատակյա գործունեության շրջանում, անհատ ուսանողներ սկսում են համալրել Դաշնակցության շարքերը: Մինչև սեպտեմբեր դաշնակցական ուսանողների շարքերը սովորաբար են: Արդեն սեպտեմբերին որոշում է կայացվում հիմնադրել ուսանողական միություն: Առաջին փուլում կազմակերպվում է սփյուռքահայ, ապա նաև ընդհանուր հավաքը: Առաջին ընդհանուր հանդիպումը տեղի է ունենում ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի 220 լսարանում, իսկ միության հիմնադիր ժողովը գումարվում է հոկտեմբերի 19-ին ժողատեղծագործության կենտրոնում՝ օրակարգում ունենալով երեք հիմնական կետ՝ ուսանողական միության հիմնադրում, միության անվան ընտրություն և անդրանիկ վարչության ընտրություն: Ըստ ընկերների հուշերի՝ միության անունը միանգամայն է ընտրվում՝ առանց երկմտելու. «Տիկոյ Աղբալյան»:

Միությունը կոչելով Հայաստանի Առաջին Հանրապետության լուսավորության նախարար, Երևանի պետական համալսարանի հիմնադիր Նիկոյ Աղբալյանի անունով՝ ուղենշվում են նաև միության ընթացքն ու առաքելությունը: Այս ճանապարհին, 1992 թ. Շուշիի ազատագրումից օրեր անց որոշում է կայացվում Շուշիի թեմական վարժարանի վերաբացման մասին՝ հենց թեմական վարժարանի շենքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արամ Մանուկյանը սովորել է այդ վարժարանում՝ որոշվում է վարժարանը կոչել Արամ Մանուկյանի անունով: Թեև, ցավ ի սիրտ, չի հաջողվում վարժարանը վերաբացել թեմական վարժարանի շենքում, ինչպես նախապես ծրագրվել էր, սակայն նույն տարվա սեպտեմբերին այլ շենքում Շուշիի թեմական վարժարանն իր դռներն է բացում սաների առջև: Ուսանողական միության ընկերներից ոմանք գործուղվում են Արցախ՝ վարժարանում ուսուցչությամբ զբաղվելու: Նրանց թվում էր նաև ներկայում ՀՅԴ Բյուրոյի անդամ Արսեն Համբարձումյանը: Երկար տարիների գործունեությունից հետո միությունը վարժարանը հանձնում է Արցախի Հանրապետությանը:

Այսպիսով՝ ՀՅԴ «Տիկոյ Աղբալյան» ուսանողական միությունը սկսում է իր գործունեությունը՝ շարքերում ունենալով 140 - 150 ընկերներ:

1990 թ. նոյեմբերին ձեռնարկվում է ՀՅԴ 100-ամյակին նվիրված միջոցառում, որտեղ էլ առաջին անգամ ընկերները ներկայանում են «Տիկոյ Աղբալյան» ուսանողական միության անունից:



Ուսանողական միությունը ակտիվորեն մասնակցում է նաև քաղաքական գործընթացներին: 1991 թ. մարտին ստորագրահավաք, նստացույցեր, հանրահավաքներ են կազմակերպվում Գերագույն խորհրդի դիմաց՝ պահանջելով չեղարկել Կարսի և Մոսկվայի պայմանագրերը: Այս նախաձեռնությունը շուտով վերածվում է համակուսակցական ձեռնարկի: Հավաքվում է մոտ 15 հազար ստորագրություն, կազմակերպվում է բազմահազարանոց հանրահավաք: Մեծ ճնշման շնորհիվ հրավիրվում է ԳԽ-ի փակ խորհրդակցություն, որին մասնակցում է նաև ուսանողական միության ներկայացուցիչը:

Միությունն ակտիվ գործունեություն է ծավալում նաև բուհերում: Երևանի գրեթե բոլոր բուհերում ստեղծվում են ՆԱՌԻՄ-ի խմբեր: Զուգահեռաբար հրատարակվում է «Ուսանող» թերթը, որը որոշ ժամանակ գործում է առանձին, ապա ներառվում է ՀՅԴ Հայաստանի կառույցի «Երկիր» օրաթերթում՝ որպես հավելված, որտեղ գաղափարական, ծրագրային, պատմական հոդվածներով ներկայանում են հենց ուսանողական միության անդամները:

Երբ որոշում է կայացվում Հայաստանում բուհական կրթությունը դարձնել վճարովի, ՆԱՌԻՄ-ի նախաձեռնությամբ ուսանողության շրջանում բողոքի մեծ ալիք է բարձրանում, որի ազդեցությամբ ժամանակի կրթության նախարարը որոշակի փոխզիջումների է գնում:

1991 թ. սեպտեմբերին ՆԱՌԻՄ-ի հիմքի վրա նախաձեռնվում է Դաշնակցության համահայկական ուսանողական առաջին համագումարը, որին մասնակցում են Սփյուռքում գործող Դաշնակցության բոլոր ուսանողական միությունների ներկայացուցիչները:

2000-ականներին ևս ՆԱՌԻՄ-ը ակտիվ հասարակական-քաղաքական գործունեություն է ծավալում՝ տարատեսակ թանկացումների դեմ պայքարից մինչև կառավարության հրաժարականի պահանջ: Զուգահեռաբար ՆԱՌԻՄ-ը շարունակում է ակտիվորեն գործել

բուհերում, բազմաթիվ ՆԱՌԻՄ-ականներ են ընդգրկվում համալսարանների ուսանողական խորհուրդներում և գիտական ընկերություններում: Կազմակերպվում են ուսանողության խնդիրներին վերաբերող բազմաթիվ համաժողովներ, խորհրդածողովներ: Մեծ աղմուկ են բարձրացնում ուսանողության շրջանում համալսարաններում կոռուպցիայի վերաբերյալ անցկացված սոցիալական հարցումները, որոնց արդյունքների հրապարակումից հետո շատ լրատվականներ անդրադարձնում են այս թեմային:

Խոսելով «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության մասին՝ առանձնապես պետք է շեշտել ՆԱՌԻՄ-ականների մասնակցությունը՝ Արցախյան ազատագրական պայքարին: Մինչև ուսանողական ջոկատի կազմավորումը ռազմի դաշտում արդեն շատ ՆԱՌԻՄ-ականներ կային: 1991 թ. ստեղծվում է ուսանողական ջոկատը, որի առաջին պատասխանատու է նշանակվում Արթուր Ղարիբյանը: Հետագայում նրան փոխարինում են Արամ Պողոսյանը, Ապրես Զոհրաբյանը, Իգոր Սարգսյանը: Տարբեր ժամանակներում ջոկատի կազմում ընդգրկվել են 60 - 70 ուսանողներ, որոնք եղան պատերազմի գրեթե բոլոր ճակատներում՝ Գետաշեն, Շահումյան, Հաղրոթ, Շուշի, Մարտակերտ, Ասկերան և այլն: Դաշնակցության գումարտակի կազմում ուսանողականը մասնակցել է նաև Ապրիլյան քառօրյա և 2020 թ. 44-օրյա պատերազմների: Արցախյան առաջին պատերազմի ընթացքում ՆԱՌԻՄ-ը ունեցել է 8 զոհ՝ Արթուր Կարապետյան, Ներսես Բարբաբյան, Գագիկ Գրիգորյան, Համլետ Հայրյան, Գրիգոր Գրիգորյան, Վահե Բաղդասարյան, Միեր Զուլհաճյան, իսկ 44-օրյա պատերազմում զոհվեց Կիմ Խաչատրյանը: Այսօր զոհված նաումականների անուններն են կրում ՀՀԴ ՆԱՌԻՄ-ի խմբերը: ՆԱՌԻՄ-ի մի շարք ընկերների անունները փառաբանվել և հռչակվել են իրենց հերոսական պայքարի համար: Նրանք արժանացել են բազմաթիվ պարգևների ու շքանշանների: Պատերազմած մեր հերոս ընկերների հիշատակին նվիրվել են գրքեր ու երգեր, նկարահանվել են ֆիլմեր:

Հավատարիմ մնալով իր գաղափարին և առաքելությանը՝ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունն այսօր էլ շարունակում է ակտիվ գործունեություն ծավալել տարբեր ուղղություններով՝ կրթական, սոցիալական, ազգային, քաղաքական և այլն: ՆԱՌԻՄ-ը ակտիվ մասնակցում է երկրում տեղի ունեցող քաղաքական գործընթացներին, մշտապես պայքարի առաջին շարքերում է: Նպատակ ունենալով երիտասարդության լայն շրջանակներին հիմնարար տեղեկություններ փոխանցել և ոգևորել նրանց առնվազն հետաքրքրվելու երկրում տեղի ունեցող հասարակական, քաղաքական իրադարձություններով՝ ՆԱՌԻՄ-ը կազմակերպում է «Հանրային քաղաքականության լսարան» քաղաքական ուսումնառության ծրագիրը, որի մի քանի փուլեր արդեն իսկ հաջողությամբ ավարտվել են՝ ունենալով մի քանի տասնյակ շրջանավարտներ: Սկսած 2022 թ. կազմակերպվում է Թաթուլ Կրպեյանի անվան «Արցախյան ընթերցումներ» ամենամյա գիտաժողովը, որի ընթացքում զեկույցներով հանդես են գալիս ոչ միայն

անվանի գիտնականներ, այլև բազմաթիվ ուսանողներ: Մենք՝ ՆԱՌԻՄ-ականներս, ստանձնել ենք նաև թերևս ամենամեծ պատասխանատվությունը՝ հանրությանը և մասնավորապես ուսանողությանը ներկայացնելու մեր ընկերոջ՝ Կիմ Խաչատրյանի կյանքն ու անմահացորդ նվիրումը հայրենիքին: Այս ճանապարհին երկու տարի անընդմեջ կազմակերպվում է Կիմի անունը կրող ամենամյա կրթաթոշակի մրցույթը:

ՆԱՌԻՄ-ի ստեղծումից ի վեր բազմաթիվ ՆԱՌԻՄ-ականներ պատասխանատու դիրքեր են զբաղեցրել և՛ պետական, և՛ կուսակցական կառույցներում՝ պատգամավորներ, նախարարներ, մարզպետներ, ՀՅԴ Բյուրոյի և Հայաստանի գերագույն մարմնի անդամներ:

Որպես հայ երիտասարդներ, որոնք անտարբեր չեն հայրենիքում և տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ, վստահ ենք, որ զույգ թշնամական պետությունների միջև մեր գոյությունը շարունակելու համար պիտի ապավինենք ազգային պետություն կերտելու տեսլականին: Այս հանգամանքից ելնելով՝ առաջնահերթ ենք համարում «ազգային-առաջադեմ» կեղծ հակադրության կարծրատիպը կտրելը: Կասկածի տեղիք չի տալիս նաև այն համոզմունքը, որ հայ-թուրքական բարեկամություն հնարավոր է միայն հայկական կողմի՝ հաղթողի դիրքից ներկայանալու պարագայում. միայն մեր հաղթանակով է տարածաշրջանում հաստատվելու տևական և կայուն խաղաղություն. «իրավունքը ուժն է միայն»: Մենք համոզված ենք, որ աշխարհում մեր տեղն ունենալու համար պարտավոր ենք կերտել ուժեղ պետություն, և մեր բոլոր քայլերն ուղղված են այդ նպատակին: Եթե դիտենք պատմության ժապավենը, կտեսնենք, որ դաշնակցական երիտասարդը մասնակից է հայրենիքի համար կարևոր հարցերի շուրջ բոլոր քննարկումներին և պայքարի առաջամարտիկն ու նախաձեռնողն է: Այս իմաստով ուսանողական միությունը ևս բացառություն չէ: Այս մասին են վկայում վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները՝ «դեղին քարտերի հանրահավաքից» մինչև «Դիմադրության» շարժում և ավելին: Ստեղծման օրից ՆԱՌԻՄ-ը և ՆԱՌԻՄ-ականներն ահռելի պատմություն են կերտել: Այս հոդվածը գրելիս գրուցել ենք աղբալյանական հիմնադիր սերնդի ընկերների հետ՝ նպատակ ունենալով ներկայացնել այդ պատմության հայտնի և անհայտ էջերը և ՆԱՌԻՄ-ը, առհասարակ, որն ազգային, պետականամետ մտածողության, երիտասարդ, հայրենասեր ու գործուն սերնդի իրական դարբնաց է: ■



# ՀՅԴ ՀԵՄ-ը ազգային պայքարի կիզակետում

Սևակ Նազարեան  
ՀՅԴ ՀԵՄ կենտրոնական վարչության ներկայացուցիչ

Հայաստանում Դաշնակցության վերընձյուղումից ի վեր օրախնդիր է եղել երիտասարդության հետ աշխատանքը: Երիտասարդությունն է, որ պատմական տարբեր ժամանակաշրջաններում երբեմն թվացյալ անտարբեր, սակայն վերջնադրոյունքում առաջամարտիկն է դարձել անկյունաքարային շրջադարձերի և պտտել է պատմության անիվը:

2018 թվականին այսօրվա իշխանությունը մոլորեցրեց հայ հանրությանը, ամբոխավարական կոչերով և խոստումներով երկիրը մտցրեց փոփոխությունների սուր փուլ: Փոփոխություններ, որոնք, ցավոք, կործանարար դարձան: Այդ ժամանակ կրկին հայ երիտասարդությունը, սոցիալական արդարության, հավասարության և զարգացման արդար նպատակներ հետապնդելու ազնիվ մղումներով, դարձավ տեղի ունեցող իրադարձությունների լոկոմոտիվը, ինչը ժողովրդին դրական փոփոխությունների հույս ներշնչեց: Իրական քաղաքական նպատակները, սակայն, որոնք գաղտնի էին պահվում ժողովրդից, այլ էին և աղետաբեր:

Հայաստանում ՀՅԴ երիտասարդական միության գործունեությունը արդարացիորեն կարելի է բաժանել 3 շրջանի:



Եր սոցիալական անարդարությունը՝ մեծացնելով անդունդը հասարակության տարբեր շերտերի միջև: Իրավամբ այս շրջանն էր, որ օգտագործվեց դրսի և ներսի շատ ուժերի կողմից՝ նախապատրաստելու 2018 թվականի «ժողովրդական» շարժումը: Այս շրջանում ՀՅԴ ՀԵՄ-ը տարբեր առիթներով երիտասարդական-քաղաքական դաշտում փորձում էր բարձրացնել սոցիալական անարդարությանը վերաբերող հարցեր, մասնակիցը դառնալ հասարակական տարբեր շարժումների՝ փորձելով դառնալ նաև հավասարակշռող ուժ այդ շարժումների մեջ բացասական տարրերի բացառման համար: Զուգահեռաբար փորձ էր կատարվում քարոզել ազգայինը՝ ընդլայնելով ազգային արժեքներ կրող երիտասարդության շրջանակը:

Որպես երկրորդ շրջան կարելի է առանձնացնել 2018 թվականի ժողովրդական շարժումից մինչև 2020 թվականի քառասունչորսօրյա պատերազմն ընկած ժամանակահատվածը, որը նշանավորվեց ազգային հարցերում հետընթացով, երբ նախկին ամեն երևույթի մերժման քողի տակ փորձ էր կատարվում տարբեր ուղղություններով հարված հասցնել ազգային արժեհամակարգին: Հայ առաքելական սուրբ եկեղեցու, հայ մշակույթի, մեր հաղթանակների և հերոսների, ազգային տոների, հայոց պատմության, հայոց լեզվի, ինչպես նաև ուղիղ կերպով Դաշնակցության հասցեին ուղղված բազմաթիվ հարվածներն անտարբեր չէին կարող թողնել ՀՅԴ երիտասարդական միությանը: Այս շրջանում էր, որ ՀՅԴ ՀԵՄ-ը իջավ երիտասարդական-քաղաքական ասպարեզ՝ որպես ամեն ազգայինի պաշտպան և կարողացավ իր ուրույն խոսքն ասել այս ասպարեզում: 2019 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցավ այդ շրջանի համար անսախաղեպ բողոքի նստացույց. գործողություններ, որոնք ուղղված էին օրվա կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի դեմ, որը պատասխանատու էր կրթական համակարգում տեղի ունեցող ապագային փոփոխությունների նախագծի համար: Այդ օրերին առաջ քաշվեց նախարարի հրաժարականի պահանջը,



Առաջինը մինչև 2018 թվականն էր, երբ Հայաստանը հարաբերականորեն անվտանգ և կայուն պետություն էր:

2016 թվականի Ապրիլյան պատերազմը առիթ դարձավ, որ ՀՅԴ ՀԵՄ տասնյակ ընկերներ ձեռք բերեն նաև մարտական փորձառություն՝ դառնալով ավագ սերնդի հետևորդը նաև այս ուղղությամբ:

Այդ շրջանում, սակայն, երկրում օրեցօր խորանում



որը, չնայած վերջնական արդյուք չունեցավ, բայց հասարակության աչքին բառացիորեն ոչնչացրեց Արայիկ Հարությունյանի արհեստածին հեղինակությունը՝ որպես նախարարի: Հետագայում տարբեր ձևաչափերով շարունակվեց պայքարը մինչև հենց իշխանության ներքին որոշմամբ՝ Արայիկ Հարությունյանի պաշտոնից ազատումը: Նստացույցն օրեր շարունակ լրատվականների ամենժամյա լուսաբանման առարկան էր դարձել, քաղաքացիների համար առիթ՝ գործող իշխանության ապագային քաղաքականության դեմ իրենց վերաբերմունքն արտահայտելու:

Մրան գուգահեռ, նույն թվականին ՀՅԴ ՀԵՄ-ը սոցիալական անարդարությանը նպաստող եկամտային հարկի համահարթեցման գաղափարի դեմ տարբեր բողոքի գործողություններ իրականացրեց՝ բարձրաձայնելով այդ փոփոխությունների հնարավոր բացասական ազդեցությունը և սոցիալական անարդարության խորացման սպառնալիքը: Կարևոր է նշել, որ բողոքի այս երկու գործողությունների ժամանակ էլ դեռ հանրային լայն աջակցություն ունեցող Նիկոլ Փաշինյանը, առիթ ստեղծելով, եկավ և հանդիպեց ՀՅԴ երիտասարդականի ընկերների հետ, սակայն դրանով իր անձի ու գործունեության մասին դրական տպավորություն թողնելու ջանքերը հակառակ ազդեցություն ունեցան:

Երրորդ՝ հետպատերազմյան շրջանը, հիմնված է այնպիսի ցավալի իրողությունների վրա, ինչպիսիք են պատերազմում պարտությունը, դավաճան իշխանության առկայությունը և ՀՀ իշխանության՝ երկիրն անդունդը տանող դավաճանական քաղաքականությունը: ՀՅԴ երիտասարդականը կարևոր մասնակցություն ունեցավ 44-օրյա պատերազմին, երբ ՀՅԴ առաջին վաշտի կազմում պատերազմի առաջին օրն իսկ շուրջ 30 հեռականներ մեկնեցին ռազմաճակատ: Հետագայում ՀԵՄ բազմաթիվ ընկերներ ևս միացան ՀՅԴ կամավորական գումարտակին:

Պատերազմի ցավալի հետևանքը և Դաշնակցության քաղաքական ուղեգիծը ՀՅԴ երիտասարդու-

թյանը հանեց փողոց՝ պայքարի: Առաջին իսկ օրերից բողոքի և անհնազանդության գործողությունների կազմակերպումը և իրականացումը, ցույցերի առաջնագծում լինելը բարձրացրին ՀՅԴ երիտասարդական միության դերը երիտասարդական դաշտում՝ ձևավորելով ազնիվ, ազգային և պայքարող երիտասարդության հեղինակություն: Սա օգնեց մեզ հետագայում ևս մեր շուրջ համախմբելու շատ երիտասարդների՝ ընդլայնելու միության, համակիրների շարքերը և համագործակցելու բազմաթիվ երիտասարդական խմբերի հետ: ՀՅԴ ՀԵՄ-ի պայքարը ակնառու էր և «Հայրենիքի փրկության», և «Դիմադրության» շարժման օրերին: Այս ողջ ընթացքում ՀՅԴ ՀԵՄ-ը ուղենիշային դերակատարություն է ունեցել և ունի ազգային երիտասարդության շրջանում:

Մենք՝ իբրև այս երկրի ազգային հիմքերի պահպաններ, իրավունք չունենք դադարեցնելու մեր պայքարը: Մենք պայքարել և պայքարելու ենք հանուն մեր իդեալների, հանուն Արցախի, հանուն Հայաստանի, հանուն մեր պատմական իրավունքների վերականգնման: Այս պայքարը պետք է մեր հաղթանակով ավարտվի, և այդ ճանապարհին դաշնակցական երիտասարդի կամքն անկոտրում է:

Միշտ կգան նորերը, և պայքարը կշարունակվի... ■



## Արդեօք կարևոր են պատանեկան միությունները

Մարիա Գարրիելեան  
Փաստաբան, լրագրող, Հայագիտական ուսուցման դասախոս

Ընդամենը եօթը տարիներ հաշուող այս հանգրուանը զինք յաջորդող կենսակայաններէն եօթնապատիկ անգամ գերակշիռ ազդեցութիւն ունի մարդուն վրայ: Պատանեկանի փուլին ամրապնդուած միտքերը, հաստատում գտած համոզումները և տարբեր ոլորտներու մէջ գծագրուած տեսլականները բարեփոխելը, դէռ չըսած, զանոնք ջնջելը հեշտութեամբ ընթացք առնող գործընթացներ չեն երբէք:

Գաղափարական մեր ամրոցին անառիկութիւնը ապահովելու, անոր դարպասներուն վրայ մագլցիլ փորձող թափփած, իմաստագուրկ ու խորադատարկ միտքերուն ու գաղափարներուն հոսքը կասեցնելու համար մեր սլաքը ուղղուած պիտի ըլլայ դէպի պատանին և պատանեկան միությունները:

Ինչպիսի՞ տեղ պիտի գրաւեն մեր պատանեկան միությունները մեր կառոյցի տարբեր բաժիններուն մէջ: Որո՞նք պիտի զբաղին պատանեկան միություններով՝ ընդհանուր վարիչ մարմինները, կոմիտէները, կեդրոնական կոմիտէները, Բիւրոյի երիտասարդական գրասենեակը...: Որո՞նք օրակարգերուն վրայ մնայուն ներկայութիւն պիտի ըլլայ պատանեկանը:

Շատ անգամ, երբ կարիք ունենանք մեր պատրաստուածութեան անյարիր դաստիարակութեան մը վերաբերող տուեալ մէջբերելու, ապա կ'արտայայտուինք, որ խնդրոյ առարկայ անձը պատանեկանի ու երիտասարդականի շարքերէն չէ անցած, այլ դիմումնագրով մաս կազմած է Հ.Յ.Դ. շարքերուն: Ուրեմն շարքայինի դաստիարակութեան մէջ ինչպիսի՞ էական արժէք կը ներկայացնէ պատանեկան միութեան մէջ ստացած կրթութիւնը:

Հ.Յ. Դաշնակցութեան համար հիմնական նշանակութիւն ունին Հ.Յ.Դ. պատանեկան միությունները: Պատանեկանի շարքերն են, որոնք երիտասարդական միություններու ու Հ.Յ.Դ. կառոյցներու անդամներ պիտի մատակարարեն:

Պատանեկան միություններու գլխաւոր առաքելութիւնը կը կեդրոնանայ մարդկային և բարոյական վսեմ սկզբունքներով պատանիներու դաստիարակութեան վրայ: Անոնք գլխաւոր պարտականութիւնն է պատանիներու ինքնութեան մէջ ազգային գիտակցութեան սերմանումն ու կրթութիւնը հիմնական այն սկզբունքով, թէ պատանին դատ ունեցող ազգի մը զաւակն է և ապագային դերակատարութիւն պիտի ունենայ իր ազգային դատի լուծման ի նպաստ ծաւալուող աշխատանքներուն մէջ: Դեռևս պատանեկան միությունները պատանիի հոգեկան և մտային աշխարհին մէջ կը սերմանեն հաւաքական աշխատանք ծաւալելու, յանձնառութիւն ստանձնելու, պարտակա-



նութիւններ վերցնելու և զանոնք ճշգրտօրէն իրականացնելու սկզբունքները:

Պատանեկան միությունները կը գործեն խմբային դրութեամբ, համաձայն միութեան՝ անդամութիւն կրթնան ունենալ մէկ կամ մէկէ աւելի խումբեր: Իրենց գործունէութեամբ առաւել աշխոյժ շրջաններու միությունները խումբերու կողքին կ'ունենան նաև յանձնախումբեր: Պատանեկան միությունները կ'ունենան վարիչներ եւ ընդհ. վարիչ մարմին (կարգ մը շրջաններու պարագային՝ նաև դաստիարակներ): Խմբական ժողովները ընդհանրապէս կը գումարուին շաբաթական հերթականութեամբ, որոնց ընթացքին ջանք կը կատարուի պատանիին մէջ սերմանելու դաշնակցական մարդը յատկանշող հիմնական սկզբունքներն ու նկարագրային գիծերը, ինչպէս՝ հայրենասիրութիւն, ընկերասիրութիւն, արիութիւն, զոհողութիւն, համարձակութիւն, արդարամտութիւն, հաւասարակշռուած դատողութիւն, կարգապահութիւն եւ գաղտնապահութիւն:

Հ.Յ.Դ. պատանեկան միություններն ունին իրենց ներքին կանոնագիրը՝ մշակուած Հ.Յ.Դ. պատանեկան միություններու ընդհանուր կանոնագիրին հիմամբ:

Պատանեկան միություններու պատասխանատուները մեծապէս կը կարևորեն պատանի-ծնողք-վարիչ-ընդհանուր վարիչ մարմին յարաբերական օղակի ամրապնդումը: Կարգ մը շրջաններ նոյնիսկ ծնողական հանդիպումներ կը կազմակերպեն:

Պատանեկան միություններու գլխաւոր գործունէութիւնը տարեկան բանակումն է, որ այնքան պահանջուած ծրագիր է պատանիներու կողմէ:

Բանակումներու կողքին պատանեկան միություններ-



րը կը կազմակերպեն խորհրդածողովներ, արշավներ, դասախօսական և գրոյցի ձեռնարկներ, ազգային ֆիլմերու ցուցադրութիւն և քննարկում, տարբեր բնագաւառներու (մարզական, թէ դաստիարակչական) մէջ մրցաշարքեր, դպրոց-բանակումներ և այլ աշխատանքներ:

Այսօրուան դրութեամբ տարբեր երկիրներու մէջ գործող պատանեկան միութիւնները տարբեր իրավիճակներ կը պարզեն: Այս տարբերութիւններ առթող շարք մը տուեալներ գոյութիւն ունին, ինչպէս.

ա. Գաղութի հնամենիութիւնը.— Աւելի քան հարիւրամեակի մը պատմութիւն ունեցող գաղութներու մէջ գործող պատանեկան միութիւններու և նորակառոյց գաղութներու մէջ նորահիմ միութիւններու միջև եղած փորձառութեան տարբերութիւններ:

բ. Երկիրներու քաղաքական դրուածքին համաձայն (ազատ, պահպանողական, կաշկանդուած...)՝ ջամբուած դաստիարակութեան տարբերութիւն:

գ. Հայկական և ոչ հայկական վարժարաններ յաճախող պատանիներու միջև տարբերութիւն:

դ. Հայախօս և ոչ հայախօս պատանիներու միջև տարբերութիւն:

ե. Զուլումի ու այլատերման վտանգը դիմակալելու իմաստով պատանեկան միութիւններու տարբերութիւն:

Նշեալ պայմանները կատարուած իրողութիւններ են, որոնց զանցառումը իրատեսութենէն հեռացում կը նշանակէ, իսկ անոնց անձնատուր ըլլալը՝ պատասխանատուութենէ խուսափում: Այս պայմանները լուրջ սերտողութեան արժանանալու պարագային կարելի է հնարատրութիւններ ստեղծել հարթելու տարբերութիւններու պատճառով գոյացած դերբուկները և հետզհետէ մօտենալ պատանեկան միութիւններու իտէլական տարբերակին:

Այս աշխատանքին մէջ հիմնական խոչընդոտը բարեփոխումներ կատարելու նկատմամբ անյուսութիւնն է: Երբ հեղգութեան կամ կամքի թուլութեան պատճառով իրավիճակի բարեփոխման անկարելիութեան

գծով հաստատումներ կը կատարենք, անտարակոյս, որ մեր աշխատանքներուն մէջ քայլ մը դէպ առաջ պիտի չկարենանք առաջնորդուիլ:

Սակայն անտուած կամքի, ջանասիրութեան, նուիրումութեան և առաքելութեան համահունչ ընթանալու կարողութիւնը ունենալու պարագային որոնք են հիմնական գործօնները, որոնք կ'ապահովեն մեր գաղափարական դղեակի ոչ միայն անխաթար պահպանումը, այլև յառաջադիմութիւնը: Այս առնչութեամբ ազդակները կարելի է ամփոփել հետևեալ կէտերուն մէջ.

ա. Ճանչնալ պատանին.— Պատանիներուն հետ արդիւնաբեր աշխատանք իրականացնելու համար հարկ է ճանչնալ պատանին: Բաւարար չէ իմանալ պատանին անունը, տարիքը, յաճախած վարժարանը: Պիտի ծանօթանանք անոր նկարագրին, բնատրութեան, առաւելութիւններուն ու թերութիւններուն: Պիտի ճանչնանք անոր ծնողքը, ընտանեկան պարագաները, դաստիարակութեան մակարդակը: Իսկ այս բոլորը աշխատանք կը պահանջեն, աշխատանք տարբեր մակարդակներու վրայ, ինչպէս ուղղակի և անուղղակի տեղեկահաւաք, գործունէութիւններու և հաւաքական աշխատանքներու ընդմէջէն պատանիի ծանօթացում և այլն:

բ.-Միրել պատանին.— Շատ անգամ ծիծաղաշարժ կը թուի ըլլալ պատանին սիրելու ազդեցութիւնը աշխոյժ պատանեկան միութիւն ունենալու իրողութեան վրայ, սակայն մեզմէ ո՞վ ցանկութիւն չ'ունենար աշխատելու այնպիսի միջավայրերու մէջ, ուր կը զգայ, թէ ինք սիրուած տարր է, ուր տիրող համերաշխ մըթնոլորտը առաւել ջանք թափելու մղում կու տայ: Եթէ հասուն մարդը կը ցանկայ և նման միջավայր կ'որոնէ աշխատելու համար, հապա ուր մնաց պատանին: Պատանին եթէ համոզուի, որ իր խումբը, իր վարիչը, իր ընկերները կը սիրեն զինք, ապա ան պիտի չմտածէ իրեն ուղղուած աշխատանքային առաջարկները մերժելու պատճառներ փնտռելու մասին, պիտի չընդունի որևէ գործի մէջ իրեն պարտականութիւն չ'անձնելը և պիտի չուզէ բացակայութիւն արձանագրել:

գ.-Յստակ ծրագիր ունենալ.— Անորոշութիւնը կը խրոչեցնէ պատանին: Ճշդեալ նպատակները և մշակուած ծրագիրները կը գրաւեն զինք, միաժամանակ կը սորվեցնեն կազմակերպուած աշխատիլ:

դ.-Անկեղծութիւնն ու թափանցիկութիւնը — Պատանին մեծահասակէն աւելի զգօս է անկեղծութեան հարցով: Դարձարձիք ու իրականութիւնը թաքցնող պատասխանները խորապէս կը վիրաւորեն զինք և կը կորսնցնեն յարաբերութեան յաջողութեան ամենակարևոր պայմանը՝ վստահութիւնը:

ե.-Հայրենասիրութեան և ազգասիրութեան սերմեր ցանել.— Անձի կազմաւորման հանգրուանէն ետք դիւրին չէ ազգային ու հայրենասիրական դաստիարակութեամբ զբաղիլ: Պատանին թէև ընտանի-

քին մեջ պետք է սնուի հայրենասիրությամբ, սակայն պատանեկան միությունները այստեղ մեծ դեր կը խաղան: Հայրենասիրական դրուագները մեծապես օգտակար կը դառնան այս պարագային, սակայն հոս պ հարկաւոր է ուշադիր ըլլալ, որ ընդմիջտ ողբերգական աւարտ ունեցող պատմութիւններ պատմելով՝ հայրենասիրութիւնը ցաւալի իրողութեան չվերածուի:

գ.-Հաւատք ընծայել պատանիին նկատմամբ.— Պատանեկան միություններուն մեջ պատանին պիտի համոզուի, որ ինք եկած է էապէս պատրաստուելու, որպէսզի յառաջիկային ազգային աշխատանքներ ստանձնելով՝ համայնքին ու հայրենիքին օգտակար տարր դառնայ: Ան պիտի հաւատայ, որ պատանեկան միութեան անդամակցութիւնը ինքնանպատակ չէ, այլ ինք ունի երկու կարևոր առաքելութիւն՝ նախ իր անձը կերտել ազնիւ ու վսեմ գաղափարներով, երկրորդ՝ հանրութեան ծառայութեան պատրաստուիլ:

է.-Վարիչի տիպարը.— Վարիչն է կերտողը ու վարիչն է քանդողը... Այո՛, վարիչի անձնատրութենէն կախեալ է ամէն բան: Վարիչի ցուցաբերած վերաբերմունքը, անոր նիստ ու կացը, վարկն ու համբաւը ուղղակի ազդեցութիւն կ'ունենան պատանիներուն վրայ: Պատանին հաստատ պիտի չ'ուզէ անսալ իր բնատրութեամբ խոցելի կամ նկարագրով անկայուն կամ վարմունքով անընդունելի վարիչին և հակառակը, նուիրական պիտի համարէ բնատրութեամբ՝ բարեհամբոյր, նկարագրով՝ աննկուն, վարմունքով՝ հաճելի վարիչին խօսքը և ջանք պիտի չ'սնայէ անոր մտերմութիւնը շահելու համար: Որպէս արդիւնք պատանին պիտի սիրէ միութիւնը և պիտի թրծուի մեր գաղափարական հանգանակին մէջ:



Վերադառնալով սկզբնական հարցումին՝ թէ ինչպիսի տեղ պիտի գրաւեն մեր պատանեկան միությունները մեր կառոյցի տարբեր բաժիններուն մէջ, և որո՞նք պիտի զբաղին պատանեկան միություններով, կը հաստատենք, որ ամենակարևոր տեղը պիտի գրաւեն անոնք և մեր կազմակերպական կառոյցի բոլոր բաժինները, իրաքանչիւրը իր հնարատրութիւններով և կանոնագրի ճշդած սահմաններով, պիտի զբաղին պատանեկան միություններու բարելաման ու յառաջդիմութեան ծրագիրներով և նորարարութեան հետ հաւասար քայլեր պահելու գործընթացով: Մանձարձակութիւններէ հեռու, սակայն, նիւթական, թէ բարոյական խնայողութիւնը երբէք տեղ պիտի չ'ունենայ պատանեկան միություններու ծրագիրներու իրագործման մէջ:

Այսօրուան դրութեամբ մօտաւորապէս երկու տասնեակ երկիրներու մէջ կը գործեն պատանեկան միություններ: Այս միություններու աշխատանքային տարողութիւնը, աշխուժութիւնը, ծրագրատրումը, թուային պատկերը իրարմէ կը տարբերին: Համապատանեկան ծրագիրներով կը զբաղի Հ.Յ.Դ. Բիւրոյի երիտասարդական գրասենեակը: Ան այս աշխատանքին առաւել կարևորութիւն ընծայելու համար յառաջացուցած է պատանեկան հարցերու յանձնախումբ, որ կը գործէ աւելի քան հինգ տարիէ ի վեր: Այս ժամանակամիջոցին գրասենեակը պատանեկանի ոլորտէն ներս իրագործած է շարք մը կարևոր ծրագիրներ ինչպէս.

ա. Մշակուած և Հ.Յ.Դ. պատանեկան միություններուն տրամադրուած է Հ.Յ.Դ. պատանեկան միություններու ուղեցոյցը:

բ. Կազմակերպուած են Հ.Յ.Դ. պատանեկան միություններու վարիչներու պատրաստութեան տարածաշրջանային (Երոպա, Ամերիկաներ և Գանատա, Միջին Արևելք) առցանց դասընթացները:

գ. Պատրաստուած է պատանեկան միություններու կազմակերպչական և դաստիարակչական իրավիճակին, անոնց դիմագրուած դժուարութիւններուն և գրասենեակէն սպասած ակնկալութիւններուն մասին հարցարան: Հարցարաններու լրացումներու հիման վրայ պատրաստուած է պատասխաններու ամփոփումի ու եզրակացութեան սերտողութիւն:

դ. Հետևողականօրէն կապ հաստատուած է Հ.Յ.Դ. պատանեկան միություններու ընդհանուր վարիչ մարմիններուն հետ և տարբեր օրակարգերով հանդիպումներ գումարուած է անոնց հետ:

ե. Պատրաստուած է Պ.Մ.Ը.Վ.Մ.-ի տեղեկատուական լրատու (whatsapp-ի խումբ):

զ. Փորձառութիւններու փոխանակման միտումով Արցախէն (Մարտունի և Ստեփանակերտ) երկու ընկերներու Սուրիա գործուղուելու համապատասխան նախագիծ մշակուած և գործադրուած է:



է. Մշակուած և պատանեկան միութիւններու ընդհանուր վարիչ մարմիններուն տրամադրուած է անդամահաւաքի յատուկ նախագիծ:

ը. Կազմակերպուած է պատանիներու շնորհքներու և հմտութիւններու յայտնաբերման «ՊԱՏԱՆԻ ԱԽՈՅԵԱՆԸ» մրցաշարքը:

թ. Նախաձեռնուած է «Պատանիի աշխարհը» պատանեկան համահայկական պարբերաթերթի հրատարակութիւն:

ժ. Նախաձեռնուած է պատանիներու պատրաստութեամբ ու մատուցմամբ դասախօսական առցանց ձեռնարկ:

ժա. Կազմակերպուած է ընդհանուր վարիչ մարմիններու, երիտասարդական և ուսանողական միութիւններու վարչութիւններու ներկայացուցիչներու համագումար:

ժբ. Եւ յարակից ու ընթացիկ այլ աշխատանքներ:

Թէև պատանեկան միութիւններու գործը երկար

ժամանակ պահանջող, անխոնջ ջանք սպառող, ծով համբերութեան կարօտող աշխատանք է, սակայն մեծապէս կարևոր է հետևեալ հիմնատրումներով.

ա. Մեր շարքերուն յարատևութեան ապահովման գլխաւոր երաշխիքը պատանեկան միութիւններն են:

բ. Գաղափարապէս պատրաստուած շարքեր ունենալու հիմնակէտը պատանեկան միութիւններն են:

գ. Հայկական վարժարաններու կողքին հայեցի ու ազգային կրթութեան օջախները պատանեկան միութիւններն են:

դ. Մարդու և հայ մարդու կերտման հնոցներէն մէկը պատանեկան միութիւններն են:

ե. Նորարարութիւններու հետ քայլ պահելու ամենալայն դաշտը պատանեկան միութիւններն են:

զ. Յաճախակիօրէն ինքնասրբագրումի և անձի զարգացման ամենամեծ ուսուցիչը նոյն ինքն պատանին է, որովհետև պատանին վստահութիւն և սէր ներշնչելու պարագային ան կրնայ ամենայն հարագատութեամբ նշել բացթողումները, թերութիւնները և յանցանքները, իսկ անոր անվերջանալի հարցաշարերուն անսխալ պատասխաններ ունենալու համար ընդմիշտ ինքնազարգացումով զբաղիլը հրամայական է: Ուրեմն ինչքան օգտակար է պատանեկան միութիւններու մէջ աշխատիլը, տակաւին ամենամեծ օգտակարութիւնը այն է, որ պատանիներուն հետ աշխատելով՝ ընդմիշտ երիտասարդ կը զգաս դուն քեզ, միթէ կայ աւելի գեղեցիկ զգացում...

Արդ, տակաւին պէտք է հարցնել պատանեկան միութիւններու կարևորութեան մասին...: Ուրեմն, ծն, առաջ, վերցնենք մեր բահն ու բրիչը, բանանք ոռոգման ակօսները ու սկսինք այս բարերը արտերու մշակման գործը և մենք շատ չենք սպասեր մեր անդաստաններու հունձքին ականատեսը դառնալու համար... ■





# Հայ ուսանողության մասնագիտական ներուժը՝ հայրենիքի համար

Եղիա Թաշճեան

Պեյրոյի Ամերիկեան համալսարանի հետազոտական կեդրոնի գիտաշխատող

Շաբաթներ առաջ Հ.Յ.Դ. Բիրոյի երիտասարդական գրասենեակը յայտարարեց՝ «ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ-ՂՈՒԹԻՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ» խորագրով ուսումնասիրություններու մրցանք ծրագրի մեկնարկը, որ նպատակ ունի համախմբել հայ ուսանողութիւնը Արցախի հիմնահարցին շուրջ: Սոյն մրցանքը նախաձեռնուած է՝ նկատի ունենալով Արցախի դիմագրաւած ճակատագրական ժամանակաշրջանը, ինչպէս նաև Հայաստանի շուրջ և Հարաւային Կովկասի մէջ աշխարհաքաղաքական սուր պայքարը և հայ ուսանողութեան մասնագիտական ներուժը Հայ դատին և մասնաւորաբար Արցախին ծառայեցնելու անհրաժեշտութիւնը:

Ծրագրին հիմնական նպատակն է մէկտեղել հայ ուսանողութեան կարողութիւնը՝ քաղաքական, տընտեսական, ընկերաբանական, իրաւագիտական, մշակոյթի և հետաքրքողական լրագրութեան բնագաւառներուն մէջ և զայն տրամադրելի դարձնել հայանպաստ գործունէութիւն ծաւալող ազդեցիկ հիմնարկներու արդիւնաւէտ օգտագործման համար: Այսինքն՝ ուղղել կուտակուած ներուժը դէպի հայանպաստ աշխատանք: 2020 թ. Արցախեան երկրորդ պատերազմը ցոյց տուաւ, որ 20-րդ դարու զէնքերու ժամանակաշրջանը ասարտած է և հակառակորդին կամ թշնամիին դէմ պայքարելու համար նախ պէտք է ուսումնասիրել անոր ներկայ քաղաքական և տնտեսական վիճակը, խթանել քննական մտածողութիւնը մեր ուսանողներուն մէջ, ինչպէս նաև զարգացնել մեր հայրենիքին տնտեսութիւնը, բարելաւել սահմանային շրջանները և հզօրացնել մեր բանակը: Այս բոլորին զուգահեռ քաջակերել մասնագիտացած սերունդի մը ստեղծումը:

2021 թ. նմանատիպ ծրագիր մը իրականացուեցաւ Միւնիքի մարզի մարտահրաւերները լուսարձակի տակ բերելու համար, որուն մասնակցեցան երկու տասնեակի հասնող ուսանողներ: «Դէպի Միւնիք» համապարփակ ծրագրի ծիրէն ներս ձեռք բերուած այս փորձը ապացուցեց, որ հայ ուսանողը ոչ միայն հետաքրքրուած է մեր հայրենիքին և ժողովուրդին համար էական նշանակութիւն ունեցող հիմնախնդիրներով, այլև ունակ է վերլուծական աչքով և քննական մօտեցումներով վերհանել խնդիրները և ներդրում ունենալ ոլորտային լուծումներու մշակման մէջ:

Հետևաբար «ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՂՈՒԹԻՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ» ծրագրին միջոցաւ աշխարհասփիռ հայ ուսանողները հնարարաւորութիւն ունին Արցա-



խին գործնական օգտակարութիւն բերելու: Ունին նաև եզակի առիթ աշխատելու հանրայայտ և մասնագետ խորհրդատուներու հետ, իրականացնելու մասնագիտական կարևոր ուսումնասիրութիւններ և այսպիսով նպաստելու հայրենիքի գալիք մարտահարաւերներու դիմակայման:

Ծրագրին մէջ ներառուած նիւթերը կրնանք բաժնել հետևեալ խմբաւորումներուն: Նշուած կը գտնուի նիւթերուն համապատասխան բացատրականները.

### Ա- Հայկական հարցը առհասարակ և Արցախեան հիմնահարցը՝ ի մասնաւորի և անոր միջազգային ընկալումն ու դրսևորումները:

- Արցախի շրջափակման կործանարար անդրադարձը Արցախի մանուկներու իրաւունքներու և հոգեվիճակին վրայ: *Գեղամ Սրբեփանեան, Արցախի Հանրապետութեան Մարդու իրաւունքներու պաշտպան:*
- Միջազգային իրաւունքի դիտանկիւնէն՝ Բերձորի միջանցքի արգելափակումը որպէս պատերազմական յանցագործութիւն: *Միրանուշ Մահակեան, Միջազգային և համեմատական իրաւունքի հայկական կեդրոնի ղեկավար:*
- Ազրայէճանի քաւիարային դիւանագիտութիւնը (caviar diplomacy) Եւրոպայի մէջ: *Հեղինէ Էվինեան,*

## Երիտասարդական

Հ.Յ.Դ. Հայ Դատի Երոսպայի գրասենեակի տնօրէնուհի:

- Ազրայէճանի և Ալիևի ընտանիքի օտարերկրեայ ներդրումներու հիմնական ուղղութիւնները և փտածութեան դրսևորումները: *Յարութ Սասունեան, «Քալիֆորնիա Քորիեր» պարբերաթերթի գլխաւոր խմբագիր:*

- Ազրայէճանի դէմ պատժամիջոցներու կիրառելիութեան կարևորութիւնը իբրև զսպող գործօն: *Արամ Համբարեան, Հ.Յ.Դ. Հայ Դատի Ուաշինկթոնի գրասենեակի տնօրէն:*

- Միջազգային մարդասիրական կազմակերպութիւններու գործունէութեան կարևորութիւնը Արցախի մէջ: *Վիզէն Ազգարեան, Մարդասիրական օժանդակութեանց միջազգային կազմակերպութեան աշխատակից:*

- Արցախի հիմնահարցը միջազգային կազմակերպութիւններու օրակարգին վրայ: *Մարիօ Եայանարեան, Հ.Յ.Դ. Հայ Դատի կեդրոնական խորհուրդի անդամ, Ընկերվար միջազգայնականի փոխնախագահ:*

Այս եօթը ուսումնասիրութիւնները կրնան օգտակար դառնալ Հայ դատի աշխատանքներուն, ինչպէս նաև օգտակարութիւն ունին Հայաստանի Հանրապետութեան գործադիր մարմիններուն համար, մանաւանդ, երբ քարոզչական աշխատանքներ տանելու ըլլան արևմտեան երկիրներու և խորհրդարանական յանձնախումբերու մէջ, Ազրայէճանի վրայ ճշում բանեցնելու դիտանկիւնէն: Ինչպէս նաև օտար երկիրներու խորհրդարաններու մէջ Արցախի ու Հայաստանի ի նպաստ բանաձևերու որդեգրման համար: Աւելին, այսպիսի ուսումնասիրութիւններ կրնան հիմք հանդիսանալ տնտեսական պատժամիջոցներու որդեգրման Ալիևի բռնապետական վարչակազմին դէմ:

### Բ- Թշնամի Ազրայէճանի տնտեսական և դիւանագիտական կապերը:

- Ազրայէճանի ուժանիւթի քաղաքականութիւնը (Energy policy) Ռուսաստանի և Արևմուտքի հետ: *Եղիա Թաշճեան, Պէյրութի Ամերիկեան համալսարանի հետազօտարական կեդրոնի գիտաշխատող:*

- Ազրայէճան և Իւրայէլ յարաբերութիւններ: *Շահան Գանարահարեան, Պէյրութի «Ազդակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր:*

- Ազրայէճանի ազգային փոքրամասնութիւններ: *Էդգար Էլրակեան, «Հայկական նախագիծ» գիտակրթական ՀԿ համահիմնադիր:*

- Ազրայէճանի յարաբերութիւնները տարածաշրջանի երկիրներու հետ: *Աբրահամ Գասպարեան, «Ճէնէսիս Արմինիա» կեդրոնի հիմնադիր տնօրէն:*

Այս չորս ուսումնասիրութիւնները կապուած են Ազրայէճանի ներքին քաղաքականութեան և տարածաշրջանէն ներս անոր վարած աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական դիրքին: 2020 թ. պատերազմէն ետք Պաքոյի հիմնական մարտահրաւերն է հաւասարակշռուած քաղաքականութիւն վարել Ռուսիոյ, Թուրքիոյ և Արևմուտքին հետ միաժամանակ, ինչպէս նաև օգտագործել քարիւղը իբրև ճնշման խաղաքարտ, որպէսզի թէ՛ Արևմուտքէն և թէ՛ Ռուսիայէն ստանայ որոշ զիջումներ Արցախի շուրջ: Հոս նաև Իւրայէլի գործօնը կարևոր է և սերտօրէն կապուած է տարածաշրջանին մէջ Իրանի դերակատարութեան հետ:

### Գ- Հայութեան դիմադրութեան և տոկոնութեան ուսումն` Արցախ

- Ազգ-բանակ գաղափարի իրագործման անհրաժեշտութիւնը Հայաստանի և Արցախի մէջ: *Գեներալ-լէյտենանտ Տիրան Խաչատրեան, ՀՀ Զինուած ուժերու գլխաւոր շտաբի պետի նախկին տեղակալ:*

- Պատմութեան խեղաթիւրման Ազրայէճանի քաղաքական և ակադեմական փորձերը: *Լեոնիկ Յովհաննէսեան, Արցախի Հանրապետութեան կրթութեան գիտութեան և սպորտի փոխնախարար:*

- Արցախի մէջ այլընտրանքային ջրային պաշարներու կարողականութիւնը (unconventional water resources): *Յովսէփ Տէր-Գէորգեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ և ջրային պաշարներու մասնագէտ:*

**MENTOR SPOTLIGHT**

**ԱՐԱՄ ԱՐԱՄՅԱՆ**

**Հ.Յ.Դ. Հայ Դատի Ուաշինկթոնի Գրասենեակի տնօրէն**

**Նիւթ`**  
Ազրայէճանի դէմ պատժամիջոցներու կիրառելիութեան կարևորութիւնը իբրև զսպող գործօն:

**STUDENTSFORARTSAKH.AM**

- Արցախի հոգևոր ժառանգության պաշտպանության հիմնախնդիրը: Հոգեշնորհ Տ. Գարեգին Վարդապետ Համբարձումեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության գրասենեակի ղեկավար:
- Արցախի տնտեսության դիմադրողականության բարձրացման հնարավորությունները: Մուրէն Բարսեղեան, Հ.Յ.Դ. Բիրոյի տնտեսական հետազոտություններու գրասենեակի պարասիսանսարու:
- Արցախեան 44 օրեայ պատերազմէն ետք արցախահայության ուղղուած հայկական մարդասիրական օժանդակությունները: Լիլիթ Մարտիրոսեան, Արցախի ՀՕՄ-ի միառորի արեւնապետուհի:

Իսկ այս վեց ուսումնասիրությունները տրամադրուած են Արցախի մշակութային, ընկերային, տրնտեսական և քաղաքական հարցերուն, Ազրպէյճանի պատմական կեղծ դիրքաւորումների և ցեղասպանական քաղաքականութեան բացայայտմանը: Հայկական զոյգ պետություններուն համար վերոնշեալները կրնան լծակներ հանդիսանալ պաշտպանելու համար արցախահայութիւնը և պահպանելու Արցախի հայկական ինքնութիւնը՝ դէմ առնելով թշնամիի նկրտումներուն:

**Մրցանքին մասին:**

Միջերը պիտի գնահատուին և արժևորուին՝ նկատի ունենալով անոնց արդիականութիւնը, կիրառական նշանակութիւնը, հետազոտական տարողութիւնը, առարկայական հիմնաւորութիւնը և թեքնիք պահանջներու յարգումը:

Այսինքն՝ մեր նպատակը անպայման ակադեմական յօդուածներ հրատարակելը չէ, ոչ ալ միայն վերլուծութեամբ բաւարարուիլը, այլ ուսումնասիրությունները պարտին առաջարկներ ներկայացնել և ունենալ «policy paper/ problem-solution»-ի բնոյթ, և ուսանողը տրամադրէ նուազագոյնը մէկ քաղաքականութեան

(policy) առաջարկ, որ Հայաստանին կամ Արցախին համար լծակներ կ'ընդձեռնէ ընտրուած հարցին առնչութեամբ: Այսպիսի ուսումնասիրություններ կրնան քննարկումներու դուռ բանալ Հայաստանի ակադեմական և քաղաքական կեանքէն ներս: Օրինակ՝ Արցախի շրջափակումը և անոր հետևանքները կամ պատճառները սոսկ չվերլուծենք, այլ առաջարկենք սպաշրջափակման գործադրելի միջոցներ՝ նկատի ունենալով Հայաստանի և Սփիւռքի ներկայ քաղաքական և տնտեսական պաշարները: Այսինքն՝ իրատեսական ըլլալը հրամայական է՝ դուրս ելլելով գոտ լոզունգային հոնտորաբանութենէ (cheap populism):

Պատրաստուած նախագիծերը պիտի քննուին մասնագետներէ բաղկացած հանձնաժողովի կողմէ: Մրցանքի մասնակցած բոլոր ուսանողները պիտի ստանան խորհրդանշական նուէրներ: Դատական կազմին կողմէ ընտրուած լուսագոյն ուսումնասիրություններուն հեղինակները պիտի ստանան կրթաթոշակներ: Առաջին մրցանակին արժանացած իրաքանչիւր ուսանող՝ 1000 ԱՄՆ տուար, երկրորդ մրցանակ՝ 750 ԱՄՆ տուար և երրորդը՝ 500 ԱՄՆ տուար դրամական պարգևներ:

Իսկ մրցանքի ասարտին պիտի գումարուի առցանց խորհրդաժողով մը, ուր լուսագոյն ուսումնասիրությունները պիտի ներկայացուին հանրութեան: Եւ բոլոր աշխատությունները լոյս պիտի տեսնեն հայաստանեան և սփիւռքեան մամուլի էջերուն մէջ: Նշենք, որ մրցանքի արդիւնքները պիտի հրապարակուին սոյն թուականի Նոյեմբեր 1-ին:

Վստահ ենք, որ ամէն ուսումնասիրություն իր ներդրումը պիտի ունենայ հայ դատի ովկեանտսին մէջ և այսօր հրամայական է, որ Հայաստանի քաղաքական վերնախաւը լսէ մեր՝ ուսանողներուն մտահոգությունները և ընդառաջէ անոնց առաջարկներուն: ■

**Գ.Յ.Դ. Բիրոյի Երիտասարդական Գրասենեակ**

**ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՐՑԱՒԻ ՀԱՄԱՐ**

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ**

**Մանրամասնությունները՝**

**STUDENTSFORARTSAKH.AM**



# Հնարավոր չէ այլ վայրում գտնել այն երջանկությունը, որը զգում ենք՝ մեր հողի վրա ապրելով

Տաթևիկ Աղաջանյան  
Արցախ, լրագրող

Հայ Յեղափոխական Դաշնակցության Արցախի երիտասարդական միության գործունեության պատմությունը սկսվում է Արցախյան առաջին պայքարագրի փուլերից, երբ Սիյունքի փայտեր օջախներից այստեղ ժամանած գործիչների ու փրկի դաշնակցական ընկերների կողմից կազմակերպվում էին սկստիական, պարանեկան բանակումներ, աշխարհը էր փայլում երիտասարդական խմբերի հետ: ՀՅԴ ԱԵՄ-ի գործունեությունը, կարելի է ասել, պաշտոնապես հայտարարվեց 1999 թ., երբ ձևավորվեց միության աշխարհային կազմակերպչական մարմինը: Անցած տարիների ընթացքում ՀՅԴ ԱԵՄ-ը և ՀՅԴ «Արամ Մանուկյան» ուսանողական միությունը բավական ակտիվ դերակատարություն են ունեցել Արցախի հասարակական, քաղաքական կյանքում, յուրաքանչյուր թրջանում ու կայացման դպրոց եղել բազմաթիվ երիտասարդների համար:



44-օրյա պատերազմը և դրա հետևանքով ստեղծված իրավիճակը բացասական ազդեցություն են թողնում ԱԵՄ-ի կազմակերպական գործունեության վրա, միությունը կրել է անդադնալի մարդկային կորուստներ, ցրվել են Մարտունու շրջանի Վազգենաշեն գյուղում, Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքում գործող պատանեկան ու երիտասարդական խմբերը: ՀՅԴ ԱԵՄ-ի կենտրոնական վարչության անդամ Վահագն Խաչատրյանի խոսքով՝ պատերազմից հետո բոլորի նման երիտասարդական միության անդամներն էլ բարդ հոգեբանական վիճակում էին գտնվում ու շատ դժվար էր բոլորին նորից կենտրոնացնել մեկ գաղափարի շուրջ: «Պատերազմի ընթացքում կառույցն ունեցավ երկու գործող ընկերների և երկու նախկին ընկերների կորուստ: Կովսականի, Վազգենաշենի ընկերները, որոնք հիմնականում վերաբնակիչներ էին, պատերազմից հետո մեծ մասամբ հաստատվել են ՀՀ-ում», — նշում է Վ. Խաչատրյանը: Նրա խոսքով՝ պատերազմից հետո մի քանի հստակ ուղղությամբ էին աշխատում, փորձում աշխուժացնել երիտասարդական կյանքը և ընկերներին վերադարձնել ակտիվ երիտասարդական դաշտ: «Տարբեր ծրագրեր իրականացրինք պատերազմից հետո վստահ չէինք, որ մասնակցային հուշակոթողների վերականգնման, մաքրման ուղղությամբ: Պատերազմից անմիջապես հետո ՀՅԴ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի հետ իրականացրինք «Վերելք» ծրագիրը, որի նպատակը երիտասարդներին որակյալ ոչ ֆորմալ կրթություն տալն էր, նաև հնարավորություն ընձեռելը, որպեսզի նրանք երիտասարդ տարիքում սկսեն բիզնես գործունեությունը, Արցախում նոր աշխատատեղեր բացեն և իրենց արմատները այս հողում զգեն: Ծրագիրը տևել է շուրջ վեց ամիս, և մասնակցել են մոտ 110

երիտասարդներ: Ուսուցման ավարտից հետո ընտրված լավագույն բիզնես ծրագրերը ֆինանսավորվել են: Դրանք այժմ էլ գործում են, սակայն ինչպես բոլոր ոլորտների վրա, այնպես էլ այս ծրագրերի վրա շրջափակումը իր բացասական ազդեցությունն է թողնում՝ արգելակելով արտադրանքի արտահանումը, ինչպես և հումքի ներմուծումը», — իրականացված ծրագրերը ներկայացնում է ԿՎ անդամը:

Բացի վերոնշյալից՝ պատերազմից հետո առաջին տարում Արցախում անց են կացվել 10 ճամբարներ, որոնց մասնակցել են շուրջ 1200 պատանիներ: Ճամբարները կյանքի են կոչվել Լիբանանի և Ֆրանսիայի ՀՅԴ երիտասարդականների հետ համատեղ: 2022 թ. ճամբարային ծրագրին միացավ ԱՄՆ արևմտյան շրջանը, վերապատրաստման և վարժողական ծրագրեր են իրականացվել, որոնց մասնակցել են Ամերիկայի արևելյան և արևմտյան շրջանների երիտասարդները: Այստեղ գտնվելով՝ նրանք իրենց փորձն են փոխանակել ու փորձառություն ձեռք բերել, նաև շփվել են տեղի երիտասարդների հետ. այսպիսով՝ ամուր կապեր են հաստատվել տարբեր շրջանների երիտասարդականների հետ: ՀՅԴ ԱԵՄ-ը ուշադրություն է դարձրել նաև սոցիալական ծրագրերին, ՀՅԴ այլ երիտասարդական շրջանների հետ իրականացվել է Արցախի սահմանամերձ շրջաններում երեխաներին նվերների բաշխման ծրագիր:

Մեծ աշխատանք է տարվում նաև պատանեկան միությունների հետ: Այս իրավիճակում հատկապես խոցելի են պատանիները, ուստի փորձ է արվում տարաբնույթ դաստիարակչական, ժամանցային և այլ ծրագրերով նրանց պահել ուշադրության կենտրոնում:

Քարոզչական ու գաղափարական աշխատանքների շնորհիվ պատանեկան և երիտասարդական նոր խմբեր են կազմավորվել Ասկերանի շրջանի Նորագյուղ և Մարտակերտի շրջանի Վանք համայնքներում: Այս երկու համայնքներում գրասենյակներ են բացվել: Բացի դրանից՝ ՀՅԴ ԱԵՄ-ը ակտիվորեն արձագանքել է քաղաքական դաշտում տեղի ունեցող զարգացումներին և տարբեր ակցիաների միջոցով իր բողոքի ձայնն ու անհամաձայնությունն է արտահայտել տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ, նաև ավանդական դարձած հիշատակի երթեր ու միջոցառումներ են կազմակերպվել:

Ինչ վերաբերում է շրջափակման ժամանակ ծավալված գործունեությանը, երիտասարդական միությունը բախվել է նոր մարտահրավերների, հատկապես տրանսպորտի բացակայության պատճառով դրժվարացել է կապը մայրաքաղաքի և մյուս շրջանների միջև:

«Համենայնդեպս այս պայմաններում ևս փորձել ենք աշխատել: Խոշոր ծրագրերից էր գարնանը Վանքում կայացած մեկօրյա պատանեկան ճամբարը, որում ընդգրկվել են նաև հարակից չորս գյուղերի պատանիները: Շուրջ 100 պատանի շրջափակման այս ծանր պայմաններում ուրախ ժամանց ու հաճելի առօրյա է ունեցել», — ասում է Վ. Խաչատրյանը:

Շրջափակումը ՀՅԴ ԱԵՄ-ին գրկել է Արցախից դուրս կազմակերպվող մի շարք ծրագրերին մասնակցելու հնարավորությունից, անհնարին է դարձել նաև դրսից ընկերների մուտքը Արցախ և տարբեր ծրագրերի իրականացումը: ՀՅԴ ԱԵՄ-ի կենտրոնական վարչության որոշմամբ, չնայած դժվարություններին՝ որոշվել է շարունակել ավանդական ճամբարների կազմակերպումը և սեփական ուժերով Մարտունիում պատանեկան ճամբար ու Վանքում երիտասարդա-



կան բանակում կազմակերպել: «Չնայած Արցախի լիակատար շրջափակմանը՝ մենք ամեն դեպքում մեր առջև նպատակ էինք դրել ամառային ճամբարները սեփական ուժերով կազմակերպել, քանի որ Սփյուռքից մեր ընկերները չկարողացան ժամանել: Մանդի, վառելիքի բացակայության պայմաններում և մնացած այլ խնդիրներն անտեսելով՝ մենք Մարտունիում կարողացանք կյանքի կոչել 10-օրյա բակային ճամբար, որին մասնակցել են 100-ից ավելի պատանիներ», — ասում է Վ. Խաչատրյանը:

«Բոլոր ծրագրերը կյանքի են կոչվում մեր ընկերների մեծ պատրաստակամության, ջանքերի շնորհիվ, որովհետև ստեղծված սոցիալ-տնտեսական ու անվտանգային խնդիրները ոչ միայն կազմակերպության աշխատանքներն են խաթարում, այլ նաև լուրջ խնդիրներ են ստեղծում մեր անձնական կյանքում: Չնայած այս ամենին՝ ծրագրերը իրականություն ենք դարձնում, որովհետև պարտական ենք զգում մեր այն ընկերների առջև, որոնք իրենց կյանքը չեն խնայել, որպեսզի կարողանանք այստեղ ապրել: Որքան էլ պայմանները լավ լինեն, հնարավոր չէ այլ վայրում գտնել այն երջանկությունը, որն այսօր մենք զգում ենք՝ ապրելով մեր հողի վրա», — նշում է ՀՅԴ ԱԵՄ-ի անդամը: ■



## Կարևոր է ազգային արժեքային կողմնորոշման ամրապնդումը երիտասարդության շրջանում

«Դրօշակի» հարցերին պատասխանում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար, ՀՅԴ անդամ Լեոնիկ Հովհաննիսյանը

— Պարոն Հովհաննիսյան, ինչ վիճակ է տեսնում շրջափակված Արցախի երիտասարդության շրջանում, որոնք են երիտասարդական պետական քաղաքականության հիմնական խնդիրները:

— Երիտասարդական պետական քաղաքականությունը Արցախի Հանրապետության պետական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և ունի ռազմավարական նշանակություն: Բնականաբար, շրջափակումը բավականին լուրջ սրբագրումներ է մտցրել մեր երիտասարդական քաղաքականության մեջ, հատկապես երիտասարդական ծրագրերի իրականացման առումով: Վերջին տարիներին երիտասարդական ծրագրերն ուղղված են եղել երիտասարդության ոլորտում առկա հիմնախնդիրների վերհանմանը, դրանց լուծման ուղիների մշակմանը, նաև ամենակարևոր խնդիրներից մեկի՝ համահայկական և միջազգային համագործակցության զարգացմանը: Թե՛ համահայկական և թե՛ միջազգային երիտասարդական կազմակերպությունների հետ սերտ կապեր ենք ունեցել, տարբեր ծրագրեր, թրեյնինգներ իրականացրել, ինչը, ցավոք սրտի, հիմա հնարավոր չէ: Համահայկական և միջազգային համագործակցության ոլորտում մեր կորուստները բավականին մեծ են, և չենք կարողանում բացի վիրտուալ կապից՝ այլ կապ հաստատել և համատեղ ծրագրեր իրականացնել:

Ներքին քաղաքականության առումով ծրագրերը հիմնականում ուղղված են երիտասարդության շրջանում ազգային արժեքների ամրապնդմանը, ռազմահայրենասիրական, առողջ ապրելակերպի դաստիարակությանը, հայկական ավանդական արժեքների պահպանմանը, հայրենաճանաչությանը, բանակ-հասարակություն կապի ամրապնդմանը, ոչ ֆորմալ կրթության, երիտասարդության հասարակական և քաղաքացիական ակտիվության խթանմանը: Այդ ծրագրերի հետ կապված տարբեր ուղղությամբ աշխատանքներ են կատարվում, մասնավորապես իրազեկվածության առումով երիտասարդության տեղեկատվական շտեմարան է ստեղծվել, «youngartsakh.am» կայքն է աշխատում, որտեղ կարելի է ծանոթանալ մեր աշխատանքներին, երիտասարդության հետ առնչվող տարբեր խնդիրների քննարկմանը և այլն:

Ազգային արժեքներ կողմնորոշման հետ կապված տարաբնույթ ծրագրեր ենք իրականացնում, մասնավորապես Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի հետ ենք ակտիվ աշխատում, կազմակերպում կրոնա-ժողովրդական տարբեր տոների հանրահռչակման միջոցառումներ, կյոթ սեղաններ, ազգային-ազատագրական պայքարի, Արցախյան շարժման հետ կապ-



ված իրադարձությունների վերաբերյալ միջոցառումներ: Ավելացնեմ նաև, որ գյուղական համայնքներում զարգացման ծրագրեր ենք իրականացնում: Օրինակ՝ անցած տարի Ասկերանի շրջանի Խանցք, Իվանյան, Խնձրիստան, Խաչնաչ համայնքներում տարբեր միջոցառումներ կազմակերպվեցին:

Եթե մինչև 2022 թ. ոլորտի բյուջեն 45 մլն դրամ էր, այս պայմաններում այդ բյուջեն 10-12 մլն դրամ է, բնականաբար ավելի քիչ ծրագրեր ենք իրականացնում:

Երիտասարդական ծրագրերի մրցույթ ենք հայտարարում, ներկայացված ծրագիրը պետք է արժանանա փորձագիտական հանձնաժողովի հավանությանը: 2022 թ. ինը ՀԿ-ի կողմից ներկայացվել է 11 ծրագիր, որից 4-ը հավանության են արժանացել և ֆինանսավորվել նախարարության կողմից: Ծրագրերը հիմնականում ուղղված էին շրջաններում, սահմանամերձ բնակավայրերում երիտասարդության իրազեկվածության բարձրացմանը, նրանց հետ տարվող աշխատանքներին, մշակութաժամանցային միջոցառումներին: Այս տարի ևս հայտարարվել է երիտասարդական ծրագրերի մրցույթ, փորձագիտական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած ծրագրերը ֆինանսավորվում ու իրագործվում են:

— Վառելիքի, սննդի սղությունը չի խոչընդոտում արդյո՞ք այդ ծրագրերի իրագործմանը:

— Բնականաբար այսօր որոշակի խնդիրներ կան,

հասկապես, որ հունիսի 15-ից Արցախը գտնվում է լիակատար շրջափակման մեջ, և որևէ հումանիտար բեռ չի հասնում, Կարմիր խաչը նույնիսկ չի կարողանում որոշակի գործառնություններ իրականացնել: Այս առումով, իհարկե, դժվարությունները շատ-շատ են, բայց ամեն ինչ անելու ենք ծրագրերը իրականություն դարձնելու համար:

— Այս իրավիճակում, մերօրյա աշխարհում արդյո՞ք իր բարձրության վրա է ազգայինը, և ինչ քայլեր է ձեռնարկում նախարարությունը այն բարձր պահելու համար:

— Շրջափակված Արցախում շատ կարևոր է ազգային արժեքային կողմնորոշման ամրապնդումը երիտասարդության շրջանում, առողջ ապրելակերպի, հոգևոր-մշակութային, ռազմահայրենասիրական դաստիարակությունը, ընդհանրապես երիտասարդների հասարակական ակտիվության խթանումը: Ճիշտ է, հիմա երիտասարդությունը սահմանափակված է այդ ակտիվությունն իրացնելու հարցում, բայց մենք ամեն ինչ պետք է անենք, որ այն խթանենք: Երիտասարդությունը մեր ապագան է, և եթե չունենանք առողջ, ազգային արժեքային կողմնորոշմամբ ամրապնդված երիտասարդություն, ապա մեր վիճակը, մեղմ ասած, չի կարող լինել բավարար:

— Արցախի երիտասարդներին կարելի՞ է կազմակերպված համարել, ինչն է նրանց համախմբում:

— Իհարկե, առկա է կարծիքների բախում, բանավեճեր, բայց հիմնականում կարելի է համարել, որ միասնականությունը պահպանվում է: Մենք դա տեսնում ենք տարբեր միջոցառումների ժամանակ, երբ որոշ հասարակական կազմակերպություններ միավորված ինչ-որ խնդիրներ են ուզում լուծել: Բայց այդ դաշտում էլ կան անելիքներ. պետք է ամեն ինչ անել այս իրավիճակին համապատասխան երիտասարդությանը ակտիվություն ներշնչելու համար:



— Շատ է խոսվում, որ Արցախյան շարժման առաջամարտիկները երիտասարդներն ու ուսանողներն էին, արդյո՞ք Արցախը ազատագրած ոգին դեռ վառ է:


— Այսօրվա երիտասարդությունը շատ բան ունի սովորելու 1988-ի սերնդից, որովհետև նրանք էին առաջամարտիկները: Ուղղակի այսօր որոշակիորեն պակասում է նախաձեռնողականությունը և դրա առկայության, սկզբիվ պայքարի, փարբեր ոլորտներում սկզբիվ ներգրավվածության պայմաններում երիտասարդությունը շատ ավելի գործ կարող է անել և առաջամարտիկի դերակատարությունը իր վրա վերցնել:

— Ձեր գործունեության ընթացքում, որպես ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախկին նախարար, որպես նախարարի տեղակալ և որպես ՀՅԴ Արցախի երիտասարդական միության պատասխանատու, հանդիպումներ եք ունեցել տարբեր վայրերի ՀՅԴ երիտասարդության հետ. ինչն է միավորում հայրենիքում և Սփյուռքում ապրող դաշնակցական երիտասարդներին:

— Գաղափարների ընդհանրությունն է միավորում դաշնակցական երիտասարդներին՝ լինի Արցախում, ՀՀ-ում, թե Սփյուռքում: Ամենակարևորը գաղափարական միասնությունն է, այսինքն՝ Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի տեսլականը, Հայ դատի հիմնախնդիրների համար պայքարը, միահամուռ պայքարը համահայկական արժեքների համար:

Խոսելով այսօրվա մասին՝ կարող եմ ասել, որ ներկա իրավիճակում գաղափարը նույնն է, մարտահրավերները չեն փոխվել, ուղղակի կան որոշակի մարտավարական խնդիրներ, որոնք լուծելու դեպքում մենք, անպայման, հաջողություններ կունենանք: Ես հավատում եմ մեր երիտասարդությանը, հավատում եմ, որ կկարողանանք առաջամարտիկի դերը վերականգնել: ■

Հարցազրույցը՝ Տաթևիկ Աղաջանյանի



## Հայաստան-Սփյուռք երիտասարդական յարաբերություններ

Դոկտ. Գեորգ Յակոբճեան

Դոկտոր, միջազգային օրէնքի ու մարդկային իրաւանց մասնագէտ

Հայաստան-Սփյուռք յարաբերություններու ընդհանուր ծիրին մէջ միշտ չէ, որ երիտասարդական յարաբերությունները համապատասխան ու արժանի ուշադրութեան և վերլուծութեան կ'արժանանան: Սոյն յօդուածը լուսարձակի տակ կը փորձէ առնել Հայաստանի և Սփյուռքի երիտասարդութեանց փոխյարաբերություններու ընդհանուր պարունակը, «context»ը, ներկայ իրավիճակը, մարտահրաւերներն ու հնարատրությունները՝ նպատակ ունենալով հայ ազգի այս երկու կենսական բաղադրիչներուն յարաբերությունները ամրապնդող առաջարկներ ու գաղափարներ տրամադրել: Յօդուածը կ'առաջնորդուի այն տրամաբանութեամբ, որ հայաստանաբնակ ու սփիւռքաբնակ երիտասարդութեան միջև երբ ամրապնդուին փոխյարաբերություններն ու խրախուսուի համագործակցությունը, կարելի է միասնական և հզօր հայկական ինքնութիւն կերտել, որ կը գերազանցէ աշխարհագրական ու աշխարհահայեացքային բոլոր սահմաններն ու մարտահրաւերները:

Կ'արժէ սկսիլ պատմական պարունակի «context»ի վերլուծութեամբ, որովհետև անոր ճշգրիտ ըմբռնումը վճռորոշ դեր կը խաղայ Հայաստանի և Սփյուռքի հայ երիտասարդութեան յարաբերություններու «dynamics»-ը հասկանալու համար: Հայոց Ցեղասպանութեան ազդեցությունը, 108 տարիներ ետք անոր հետևանքները չվերացնելն ու արդարությունը չվերականգնելը, Հայաստանի խորհրդայնացման տարիներուն Հայաստանի ու Եւրոպայի Սփյուռքի մէջ ձևաորոշած ընկերաբարոյական արժեհամակարգը, Հայաստանի վերանկայացումէն ի վեր պետականաշինութեան գործընթացը, ընկերատնտեսական ու քաղաքական պայմանները, արցախեան հիմնախնդիրը, յաղթությունն ու ցուալի պարտությունը, Արցախի ներկայ բարդ ու տագնապալի վիճակը ուղղակիօրէն կ'ազդեն երիտասարդութեան ներաշխարհին ու պատկերացումներուն, ինչպէս նաև երիտասարդական յարաբերություններուն վրայ:

Աւելին, հայութեան աշխարհով մէկ ցրուած ու պանդուխտ ըլլալու իրականությունը, Եւրոպայի ու Ժամանակակից Սփյուռքի համայնքներու ստեղծումը, սփիւռքեան համայնքներու յարափոփոխ պայմանները, անոնց (չ)կազմակերպութեան մակարդակը, երիտասարդութիւնը ներգրաւելու (չ)կարողականությունը, ժամանակին հետ քայլ պահելու դժուարությունները, արևմտահայ ու արևելահայ լեզուներու, ինչպէս նաև հայախօս ու օտարախօս հայ երիտասարդութեան առկայությունը, ընկերային հաղորդակցութեան գերժամանակակից միջոցներն ու մասնաւոր ալիւմայ, բռնի կամ կամաւոր (աւելի բարենպաստ կեանք ունենալու համար) հայրենիքէն հեռացողի (կամ անոր զուակը, թողը, ծողը ըլլալու) մտայնությունները, հողին վրայ անապահով ու անորոշ զգալու կամ հողի



կարօտով ու անկէ հեռու ապրողներու բազմապիսի տագնապներն ու դժգոհությունները կը բարդացնեն ու կ'ազդեն երիտասարդական յարաբերություններուն վրայ: Իսկ երիտասարդական յարաբերությունները կը տարբերին այլ տարիքային խաւերու յարաբերություններէն հիմնականին մէջ յուզականութեան, ըմբռնութեան, խանդավառութեան, փորձառութեան պակասի, արկածախնդրութեան ու նորարականութեան հակուած ըլլալու գործոններու վրայ:

Վերոնշեալ իրողություններու և գործոններու լոյսին տակ է, որ այսօր կը ձևաորուի Հայաստանի ու Սփյուռքի երիտասարդութեան ինքնութիւնը. տարբեր աշխարհայեացքներ, լեզուներ, մշակութային գործելակերպեր, Եւրոպայի, ինչպէս նաև տարբեր ու երբեմն հակասական հասարակական-քաղաքական միջավայրերու ազդեցություններ ընկանաբար հայկական ինքնութեան բազմազան դրսևորումներու արտայայտման կ'առաջնորդեն: Այս տատանումներն ու տարբերությունները ճանչնալն ու յարգելը և ըստ այնմ գործելը կենսական նշանակություն ունին Հայաստանի և Սփյուռքի երիտասարդություններուն միջև իմաստալից կապեր հաստատելու համար: Այսինքն՝ ինքնութեան բազմազանությունը բաժանարար ու տկարացնող գործոն տեսնելու փոխարէն, հարստացնող ու զիրար ամբողջացնող ներուժի, համաշխարհային հզօր ու գործող ցանցի(երու) (networks) վերածելը մեկնակէտը կը թուի ըլլալ առողջ, կայուն ու արդիւնաւետ երիտասարդական յարաբերություններու մշակման համար: Աւելի պարզ, երբ Հայաստանի ու Սփյուռքի երիտասարդութեան մասին քննարկում կը կատարուի, բնաւ մէկը միսէն աւելի լաւի, մէկը միսէն աւելի «աշխարհ տեսած»ի, մէկը միսէն աւելի առիթներ ունեցողի ու նաև մէկը միսէն աւելի «հայ»ի, հայրենասէրի կամ հայրենատէրի մրցակցութեան խնդիր պէտք չէ բարձրանայ: Սփյուռքի և Հայաստանի երիտասարդութիւնը համահաւասար հարթակի վրայ տարբեր ու բազմազան ազդեցություններու տակ ըլլալով հանդերձ՝ մէկ ընդհանուր ու ներառական (in-



**Հ.Յ.Դ. Երիտասարդական Համագումար  
Փետրուար 6-10 | Երեւան - Սփինք**



clusive) հայկական ինքնութեան կրողն է, որ զիրար կ'ամբողջացնէ ու կը հզօրացնէ:

Առանց այս տարբերություններուն գծով փոխհակացողութեան զարգացման՝ Սփինքի ու Հայաստանի երիտասարդություններուն փոխադարձ ընկալումներն ու կարծրատիպերը դժուար, թէ յաղթահարուին: Կարծրատիպերու յաղթահարումը ինքնանպատակ չէ: Նախապէս մտածուած պատկերացումներու և կարծրատիպերու յաղթահարումը ճանապարհ կը հարթէ բաց երկխօսութեան, երկարատև համագործակցական նախագծերու և ընդհանուր նպատակներու ու ձգտումներու իրագործման համար:

Ահա, թէ ինչու նախ և առաջ Հայաստանի և Սփինքի հայ երիտասարդները պէտք է զիրար ճանչան...: Բարձր է թիւը այն սփինքահայ երիտասարդներուն, որոնք այս կամ այն պատճառով կամ ծրագրով Հայաստան կ'այցելեն՝ առանց կայուն ու մնայուն յարաբերություններ ստեղծելու հայաստանաբնակ իրենց հայրենակիցներուն հետ...: Գրեթէ նոյնն է պարագան, երբ հայաստանաբնակ երիտասարդներ ուսանելու և կամ այլ պատճառներու բերումով ժամանակաւորապէս «սփինքեան» քաղաքներու մէջ կը յայտնուին, ուր աշխոյժ հայկական համայնքներ կը գործեն, սակայն ճիգ չեն թափեր տեղւոյն հայութեան ծանօթանալու, մտերմանալու և համայնքային կեանքին մասնակցելու համար:

Նկատի առած երկու յատուածներուն միջև փոխադարձ ճանաչողութեան մակարդակի բարելաւման հրամայականը՝ Հայաստանի մէջ կազմակերպուած երիտասարդական բոլոր ծրագրերը (համահայկական, մարզական, կրթական, սկաուտական, քաղաքական, կամաւորական և այլն) պէտք է յստակօրէն նպատակադրեն ու յստակապէս շանքեր գործադրեն Հայաստան-Սփինք երիտասարդական կայուն յարաբերություններու ստեղծման համար: Իսկ Սփինքի մէջ ապրող երիտասարդներն ու երիտասարդական կառոյցները ճիգ պէտք չէ խնայեն Հայաստանէն ժամանած երիտասարդները ներգրաւելու համար: Իրար

շանքերն ու ձեռքբերումները գնահատելու և անոնց վրայ նոր ձեռքբերումներ կառուցելու հնարություններուն պէտք է տիրապետել ու հնարաւոր բոլոր արդի միջոցներն օգտագործել, ինչպէս, օրինակ՝ առցանց հարթակներ, գործընկերություններ, նորարական ծրագրերու ֆինանսատրում, վարժողական ծրագրեր և այլն:

Այս ծիրին մէջ շատ կարեւոր է, որ Հայաստան-Սփինք երիտասարդական յարաբերությունները հնարաւորինս քիչ ազդուին գնայուն իշխանություններու կամ այլ դերակատարներու քաղաքականություններով կամ ճղճիմ առաջնահերթություններով: Հայաստան-Սփինք փոխվստահութեան անկման ու յարաբերություններու կտրուկ վատթարացման այս օրերուն հրամայական է, որ գոնէ երիտասարդական առողջ յարաբերություններուն տրուի հաստատութեան (institutional) բնոյթ, ուր գործող իշխանությունները քիչ ազդեցութիւն ունենան այդ յարաբերություններու առողջ ընթացքը կասեցնելու վրայ: Այսինքն՝ անկախ, թէ Հայաստանի գործող իշխանություններուն ու Սփինքի պաշտօնական կառոյցներուն յարաբերությունները ինչ մակարդակի վրայ են, Հայաստանի ու Սփինքի քաղաքական մտքի ներկայացուցիչները պէտք է այնպիսի հասունութիւն ու լայնախոհութիւն ցուցաբերեն, որ ժամանակաւոր յարաբերություններու վատթարացումն ու փոխվստահութեան անկումը երկարաժամկետ ու բացասական հետևանքներ չունենան երիտասարդական յարաբերություններուն վրայ:

Այստեղ պէտք չէ ուրանալ, որ են Հայաստանի, են Սփինքի երիտասարդները Հայաստանի մէջ ընթացող քաղաքական հարցերու և զարգացումներու գծով յաճախ տարբեր փորձառություններ և տեսակետներ ունին: Ընկերային հաղորդակցութեան միջոցներուն վրայ հետևեալ երևոյթները համատարած են՝ կրաւորական, զարմացնող լռութիւն, «քաղաքականութեամբ չզբաղուելու» չքմեղանք, յուսալքութիւն ու երբեմն հայիոյախառն, զիրար չհանդուրժող, զիրար այպանող ու վանողական լեզուակրիւներ: Հայաստանի ու Սփինքի երիտասարդութեան միջև կառուցողական բանավեճի մասնակցելու, անկաշկանդ հարթակ տրամադրելու, փաստարկ ու հակափաստարկ ներկայացնելու, զիրար լսելու և հասկնալու մշակոյթ չէ ձևաւորուած: Անկախ մասնագիտութենէ կամ հետաքրքրություններէ՝ ազգին ու պետականութեան վերաբերող համահայկական գերինդիքներուն նկատմամբ պատասխանատուութիւն ցուցաբերելը, քաղաքական զարգացումներուն վերաբերեալ յարգալից քննարկումներու մասնակցիլը, կառուցողական բանավեճերու հարթակներ ստեղծելը և որոշումներու կայացման գործընթացներուն երիտասարդներուն մասնակցութիւնը խրախուսելը ընդհանուր տարածք կրնան ստեղծել քաղաքական մտահոգություններու լուծման և հասարակ յայտարարի հասնելու համար:

Քաղաքական գործընթացներէն վեր ու անդին՝ պետականաշինութիւնը, ազգային անվտանգութիւնը (ներառեալ Արցախի ու արցախահայութեան), կայուն զարգացումը, արդարութեան վերականգնումը,



մարդու իրատունքները և ընկերային արդարությունը կ'ոգեշնչեն հայ երիտասարդները, որպեսզի անկախ աշխարհագրական հեռավորություններուն ու բազմապիսի տարբերություններուն՝ միասին գործեն: Համագործակցության համար այնպիսի ոլորտներ կան, ինչպիսիք են ձեռներեցությունը, արհեստագիտությունը, արուեստը և ակադեմիան, որոնց միջոցաւ Սփիւռքի և Հայաստանի երիտասարդությունը կրնա իր հաւաքական ուժերը մէկտեղել և դրական փոփոխություններ յառաջացնել: Փոխադարձ յաջողությունները նշելը, մշակութային փոխանակումը խթանելը և երկու խումբերուն անհատներուն և կազմակերպություններուն ներդրումը գնահատելը միասնության, հպարտության, ինչպէս նաև հայ ազգի մաս ըլլալու զգացումը կ'ամրապնդեն:

Հայաստանի ու Սփիւռքի երիտասարդները հայոց պետականության, հայ մշակոյթի, քաղաքակրթու-

թեան և ժառանգութեան պահպանման, զարգացման ու կերտման ընդհանուր պատասխանատուութիւնը կը կրեն հաւասարապէս: Հայոց նորագոյն պատմութեան, քաղաքակրթութեան նպաստելու կողքին համաշխարհային ու համամարդկային զարգացումներուն մասնակցելու համատեղ ջանքերը նոյնքան էական են, որովհետև այդ ներդրումները ոչ միայն կ'ամրապնդեն հայ երիտասարդներու հաւաքական ինքնությունը, այլ նաև կ'ապահովեն աշխարհատարած հայութեան և Հայաստանի անվտանգութիւնը:

Այս պատճառաւ Հայաստանի և Սփիւռքի հայ երիտասարդներուն խրախուսելը, փոխյարաբերություններու սերտացման և համագործակցութեան կայուն հարթակներ ու առիթներ տրամադրելը, ինքնավստահութեան ու ստեղծագործութեան մակարդակը բարձրացնելը, անկոտորում կամքով ու պայքարի աննահանջ ոգով տոգորելը, յուսալքութենէ հեռացնելը, համագգային գաղափարախօսութեան շուրջ համախմբելը հայրենի և սփիւռքեան համապատասխան մարմիններուն ու կառոյցներուն առաջնային պարտականությունն ու պարտաւորությունն են: Այս բոլորին մշակումը, որդեգրումը, գործադրումն ու արժևորումը ի սկզբանէ թերի են ու նոյնիսկ ապարդիւն, եթէ չկատարուին Հայաստանի և Սփիւռքի երիտասարդութեան խորքային ու լուրջ ներգրաւածութեամբ, երիտասարդութեան հեն, երիտասարդութեան համար...: ■



## Հ.Յ.Դ. երիտասարդականի արտաքին յարաբերական գործունեություն

Դոկտ. Գեորգ Յակոբճեան  
Դոկտոր, միջազգային օրենքի ու մարդկային իրաւանց մասնագէտ

Հ.Յ.Դ. երիտասարդական կառոյցի կարևոր աշխատանքի դաշտերէն մէկը արտաքին յարաբերական ոլորտն է: Հ.Յ.Դ. երիտասարդականի ռազմավարական առաջնահերթութեան մէջ կը մտնէ պատրաստել քաղաքական յարաբերական գործի ատակ մարդուծ և կազմաւորել միջազգային ու տեղական քաղաքական յարաբերական աշխատանքներու մէջ հմտութիւն ունեցող երիտասարդներ: Հ.Յ.Դ. երիտասարդականի արտաքին յարաբերական աշխատանքի ընդհանուր ուղղութիւնը կը ճշդէ երիտասարդական խորհուրդը Հ.Յ.Դ. երիտասարդական հայեցակարգին հիման վրայ:

Հ.Յ.Դ. երիտասարդականի արտաքին յարաբերական աշխատանքները կը միտին Հայաստանի ու հայութեան յուզող հարցերը միջազգային երիտասարդական կառոյցներուն և համապատասխան մարմիններուն մօտ բարձրաձայնել, հայկական հարցի գծով իրազեկութեան մակարդակը բարձրացնել ու անհրաժեշտ քարոզչական, տեղեկատուական և յարաբերական աշխատանք տանիլ: Սոյն գործունեութեամբ Հ.Յ.Դ. երիտասարդականի ծրագրային և գաղափարական նպատակներն ու սկզբունքները միջազգային գործընկերներու և հարթակներու մօտ առաւել հնչեղութիւն կը գտնեն: Մեր հիմնական առաջնահերթութիւններն են՝ Արցախի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքի պաշտպանութիւնը, Հայոց Յեղասպանութեան հետևանքներու վերացումը, Դաշնակցութեան ընկերվարական համոզումներու գործնական կիրառելիութեան առիթներ ստեղծելը և այդ արժեքային համակարգի տարածումը Հայաստանի մէջ, ինչպէս նաև միջազգային հարթակներու մէջ առողջ և տևական կապերու հաստատումը՝ որպէս հիմնական նպատակ ունենալով Հայաստանի հզօրացումը: Իսկ այլ իմաստով, արտաքին յարաբերական աշխատանքի մէջ թրծելով դաշնակցական երիտասարդները, Հ.Յ.Դ. Հայ դատի յանձնախումբերուն և գրասենեակներուն համար ատակ մարդուծի հայթայթումը ապահովել:

Հ.Յ.Դ. երիտասարդական կառոյցը լիիրաւ անդամ է Ընկերվար երիտասարդներու միջազգային միութեան (IUSY)-ին, երիտասարդ երոպական ընկերվարականներին (YES), և International Falcon Movement-Socialist Education International (IFM)-ին: IUSY-ը համաշխարհային ընկերվար երիտասարդական կառոյց է, որուն կ'անդամակցին աւելի քան 163 կազմակերպութիւններ աշխարհի 110 երկիրներէ: YES-ը Եվրոպայի մէջ երիտասարդական ընկերվարական կազմակերպութիւններու համախմբում մըն է, որուն Հ.Յ.Դ. երիտասարդականը կ'անդամակցի 2015 թ. էն ի վեր՝ որպէս լիիրաւ անդամ: Իսկ IFM-ը պա-



տանեկան կազմակերպութիւններու հովանաւորող կառոյց է, որ պատանիներն ու երիտասարդները ընկերվարական արժեքներով կը դաստիարակէ՝ հասասարութեան, ժողովրդավարութեան, խաղաղութեան, համերաշխութեան, համագործակցութեան և բարեկամութեան հիման վրայ:

Սոյն կառոյցներուն ճամբով վերջին տասը տարիներուն Հ.Յ.Դ. երիտասարդականը ռազմավարական մօտեցումով յաջողած է բազմաթիւ անգամներ Հայոց Յեղասպանութեան ու Արցախի հիմնահարցի գծով հայանպաստ բանաձևեր ու յայտարարութիւններ որդեգրել, այս կառոյցներուն անդամ կազմակերպութիւններուն մօտ հայկական հարցի տեղեկացուածութեան մակարդակը և անոնց յարաբերութիւնները Հայաստանի ու Արցախի երիտասարդական կառոյցներուն հետ բարելաւել, ինչպէս նաև ղեկավար դեր ստանձնել նախագահութիւններու և Սևծովեան տարածաշրջանի համագործակցութեան BSAC-ի յանձնաժողովին մէջ ու աշխոյժ մասնակցութեան շնորհիւ քանի մը պատուիրակութիւններ հրաւիրել ու ժողովներ գումարել Հայաստանի ու Արցախի մէջ: Աւելին, 2015-էն սկսեալ՝ Հ.Յ.Դ. յաջողած է IUSY ընդհանուր ժողովներուն փոխնախագահութեան համար ընտրապայքար տանիլ և վերջին 8 տարիներուն ընթացքին 2 ընտրութիւններ յաջողցնելով՝ մնայուն կերպով Հ.Յ.Դ.ն ներկայացուցիչ ունեցած է IUSY-ի նախագահութեան մէջ՝ որպէս փոխնախագահ, յանձնինս՝ Կարօ Շատոյեանին, ապա՝ Սարինէ Աբրահամեանին:

Հ.Յ.Դ. երիտասարդական կառոյցի արտաքին յարաբերական աշխատանքներուն շնորհիւ հետևեալ ժողովներն ու միջոցառումները գումարուած են Հայաստանի մէջ. 2015 թ. «IUSY World Council» Երևանի մէջ, 2017 թ. «Study visit» Արցախի մէջ և 2022 թ.

«BSAC-ի ժողով»՝ Երևանի և Կորիսի մեջ:

Պէտք է նշել նաև, որ Հ.Յ.Դ. երիտասարդականը անցնող տարիներուն աշխոյժ գործունէութիւն կը ծաւալէ IUSY-ի և այլ տարածաշրջանային շրջանակներուն մօտ: Կեդրոնականով միայն 2023-ի վրայ՝ Մարտ ամսուն Պերլինի մէջ IUSY-ի Եւրոպայի տարածաշրջանի ամէնամեայ ժողովին Հ.Յ.Դ. երիտասարդականը Արցախի ներկայ իրավիճակը մանրամասնեց ու ներկայացուց շրջափակման հետևանքները և Ազրբայէյճանի կողմէ իրականացուած ցեղային մաքրագործման քայլերը Արցախի հայ բնակչութեան նկատմամբ: Հ.Յ.Դ-ի պատուիրակութիւնը այցելեց նաև Գերմանիոյ խորհրդարան (Bundestag) և շարք մը հանդիպումներ ունեցաւ Գերմանիայի Ընկերվարական կուսակցութեան (SDP) քանի մը պատգամաւորներուն հետ:

Յունիս 22-25 Փանամայի մէջ տեղի ունեցաւ Ընկերվար երիտասարդներու միջազգային միութեան բարձրագոյն ժողովը: Երկու տարին անգամ մը գումարուող ժողովին մասնակցեցան շուրջ 70 երկիրներէ կազմակերպութիւններու 300 պատուիրակներ: Բարձրագոյն այս ժողովին ղեկավար մարմինը կը ներկայացնէ հաշուետու զեկուցում, կը ճշդօրէն կազմակերպութեան ապագայ ընելիքները և կ'ընտրուի նոր ղեկավար մարմին մը: Ժողովին կարևոր նշանակութիւն ունի բանաձևերու ներկայացումը և որդեգրումը: Հ.Յ.Դ. երիտասարդականի ջանքերով ընդունուեցաւ Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը ճանչցող և Ազրբայէյճանի կողմէ Արցախի ժողովուրդին նկատմամբ ցեղային զտման քաղաքականութիւնը դատապարտող բանաձևը: Կազմակերպութիւնը կոչ կ'ուղղէ առանց որևէ նախապայմանի անյապաղ բանալ Բերձորի միջանցքը և վերջ դնել Արցախի շրջափակման: Աւելցնենք, որ Թուրքիոյ Հանրապետական ժողովուրդի կուսակցութեան երիտասարդական թևի լիիրաւ անդամակցութեան դիմումը մերժուեցաւ մաս-



Ընկերվար երիտասարդների միջազգային միութեան ղեկավարութիւնը Միւնխի մէջ

նաւորապէս կազմակերպութեան՝ Հայոց Տեղապանութեան, Արցախի ժողովուրդի ինքնորոշման, քիւրտ փոքրամասնութեան իրաւունքներուն և Թուրքիոյ մէջ սուրիացի տեղահանուածներուն վերաբերեալ դիրքորոշումներուն պատճառով: Ժողովի ասարտին կատարուեցաւ նոր նախագահութեան ընտրութիւնը, և Հ.Յ.Դ. երիտասարդականի թեկնածու Սարինէ Աբրահամեան վերընտրուեցաւ Ընկերվար երիտասարդներու միջազգային միութեան փոխնախագահ 2023-2025 շրջանին համար:

Վերոնշեալ աշխատանքներէն բացի՝ արտաքին յարաբերական գործունէութիւնը կը պահանջէ ուսումնասիրական աշխատանքներու անհրաժեշտութիւն, ինչպէս, օրինակ՝ ուսումնասիրել ՄԱԿ-ի հետ առընչուած երիտասարդական ծրագրերն ու անոնց կապակցութիւնը մեր նպատակներուն, տարածաշրջանային երիտասարդական ցանցերն ու կառոյցները: Առաւել ևս յարաբերութիւններ մշակել և ջանալ միասնաբար ծրագիրներ կեանքի կոչել ցեղասպանութեան ենթարկուած ազգերու երիտ. շարժումներու հետ՝ հրեայ, ռուսաստացի, եզդիի, եթովպացի, պոսնիացի, և այլն: Միշտ կարևորելով գիտելիքներու թարմացումն ու փորձառութեան փոխանակումը այս մարզին մէջ ստակ մասնագէտներու հետ:

Եզրափակելով՝ Հ.Յ.Դ. երիտասարդականի արտաքին յարաբերական գործունէութիւնը, որպէս տինամիք ուժ, կը նպաստէ աշխարհատարած հայ հասարակութեան ապագան կերտելու գործին: Երիտասարդական տարբեր նախաձեռնութիւններու մէջ ներգրաւուելու, միջազգային գործընկերութիւններու խթանման և հայանպաստ նպատակներու ջատագովութեան միջոցով Հ.Յ.Դ. երիտասարդականը կ'ապացուցէ իր յանձնառութիւնը համաշխարհային մակարդակի վրայ դրական ազդեցութիւն ունենալու և հայկական հարցին մէջ իր ինքնորոշյալ դերակատարութիւնը վերցնելու: Հ.Յ.Դ. երիտասարդականը կը շարունակէ զարգանալ և ընդլայնել իր հորիզոնները արտաքին յարաբերական մարզին մէջ, քաղաքական երիտասարդական շրջանակներու և հարթակներու մօտ՝ որպէս դիւանագիտական երկրորդ և երրորդ ճանապարհ (track two & three diplomacy), հայանպաստ նոր նուաճումներ արձանագրելու համար: ■



ՀՅԴ երիտասարդականի պատուիրակութիւնը Ընկերվար երիտասարդների միջազգային միութեան ընդհանուր ժողովում. 2023 թ. Փանամա

## Հայ երիտասարդը՝ Դաշնակցության գալով

Ցողիկ Աշրգեան

Հ.Յ.Դ. Բիրոյի երիտասարդական գրասենեակի պատասխանատու

Հայոց պատմությունը տարբեր ժամանակահատվածներում ընթացքին Հայաստանի անկախությունը վերականգնելու համար մղուած իրերայաջորդ պայքարի պատմություն է: Հայոց հաւաքական նկարագրին վրայ դաշուած է մաքառումի կնիքը:

Նոր ժամանակներուն հայութեան դարաւոր պայքարներու և արդարութեան կանչին որպէս արձագանգ, ծնունդ առաւ Դաշնակցութիւնը և պոռթկաց մեր ժողովուրդի հարազատ հագագէն՝ հայութեան կրած տառապանքին և ապրած անիրաւութեան վերջ տալու վճռականութեամբ: Երբ Արևմտահայաստանը կը հիծէր օսմանտան բռնապետութեան տակ, երբ բռնութիւն, զրկանք, թալան, մարդկային իրաւունքներու աղաղակող ոտնահարում, կեղեքում, հալածանք և կոտորածներ տեղի կ'ունենային պապենական հողին վրայ: Այս բոլորին ընդդէմ հայ մարդուն արժանավայել կեանք ապահովելու նպատակով, հայրենասիրութեան և ազգի մարդկային ու ազգային իրաւունքները վերականգնելու համար ՅԱՐԱՏԵՒ ԿՌԻՒԻ ԴՐՕՇԸ պարզեց Դաշնակցութիւնը:

**Հայ ժողովուրդի հարազատ ձուլարաններուն մէջ ջրդեղուեցաւ Դաշնակցութիւնը: Ան յետագային բանաձևեց և դարբնեց մեր ազգային տեսլականը՝ Միացեալ, Ազատ և Անկախ Հայաստան գերագոյն նպատակը, որուն հանգրուանային իրականացման և աստիճանական կերտման կը հաւատանք՝ գործելաոճային այլազանութեամբ և առարկայական ու ենթակայական պայմաններու փոխկապակցուած համադրման պատմափիլիսոփայական մեր ընթրնման գործնականացմամբ:**

**Հայ առաջադէմ երիտասարդութեան փայլուն ներկայացուցիչները եղան այս կազմակերպութեան մտքի, խիղճի և կամքի ռահվիրաները: Հայ երիտասարդ սերունդներ եկան և կու գան Դաշնակցութեան հայրենասիրութեան և արդարութեան մղումով:**

Ներկայիս միջազգային և տարածաշրջանային յարափոփոխ պայմաններու ականատես ենք և յայտնուած ենք քաղաքական յորձանուտի մէջ: Ունինք ապագային և ապաշնորհ քաղաքական ուղեգիծ առաջ տանող իշխանութիւններ, որոնց մեղսակցութեամբ և խաղաղութեան քօղով շղարշուած՝ մեր գոյգ պետութիւնները կ'աքառուին ստրկութեան և գերեվարութեան մահացու ճիրաններ:



Տակալին բարախտուն է Արցախեան ազատամարտի նահատակներուն յիշատակը: Իսկ հայրենի հողը, հայկեան ցեղի հագարաւոր մատղաշ զինուորներու մատունքները քնքշօրէն իր մէջ պարուրած ըլլալով՝ արին կը բուրէ: Վրէժ կը մոնչեն Եռաբլուրն ու Արցախի Երբայրական պանթէոնը:

Արիաբար նահատակուած պայծառ երիտասարդներուն հասակակիցները խարխալումներու մէջ են: Ստուար մաս մը՝ աչքաթող ըրած ազգային գոյատևման պայքարը, անհատական բարօրութեան խաբկանքին տրուած է և ցնորաբար կը մտածէ, որ գերծ մնալով քաղաքական գործընթացներէն և անոր ազդեցութիւններէն՝ կրնայ անձնական կեանքը շենցնել: Այլ հատուած մը լճացման և այլասերման զոհ դարձած է: Անտարբերութիւնը իր մէջ կը կլանէ դեռատի հոգիներ: Իսկ ներկայ աշխարհաքաղաքական անկայուն վիճակը և ապաքաղաքական հոսանքները երիտասարդներու դերակատարութիւնը կը չէգոքացնեն և զանոնք կը մեկուսացնեն հանրային կեանքէն:

Առաջնային է հայ երիտասարդութեան մօտ ՀԱՅ-ԿԱԿԱՆ ՏԵՍԱԼԱԿԱՆԻ ՁԵՒԱԻՌՈՒՄԸ: Իրականանալի հայկական տեսլական, որ հիմնուած է ազգային անվտանգութեան հաստատման սկզբունքին վրայ, թէկուզ դժուարանցելի և դաժան, բայց ելքի միակ ճանապարհը՝ ապահովելու համար ամբողջական հայութեան բարօրութիւնը Հայկական լեռնաշխարհին վրայ:



Ներկայ ծանրագոյն մարտահրաւերները յաղթահարելու սկիզբը համահայկական ուժերու համախմբման և գործի դնելուն մէջ է: Իսկ մեր կուսակցութեան համար միշտ ալ ուժի հիմնական աղբիւրը եղած է ու է հայ երիտասարդութիւնը, այդ շարքում՝ ուսանողութիւնը:

Ինչպիսի՞ յատկանիշներու տէր երիտասարդն է, որ Դաշնակցութեան պիտի միանայ ի խնդիր հայկական տեսլականին:

Այն երիտասարդը, որ հաւաքական նպատակի հաւատացող է՝ ծառայութեան ճամբով, անհատական գոհողութեամբ, միևնոյն ժամանակ ինքնակերտման մշտնջենական ձգտումով, արդարութիւնը ամէտրեք և բոլորին համար հաւասարապէս պատկերացնող՝ նոյն ատեն վստահ ըլլալով, որ Դաշնակցութեան հետ կրնայ իր կեանքը ՇԱՇԵԿԱՆՕՐԷՆ ԻՄԱՍՏԱԻՈՐԵԼ: Կարևորագոյն առաւելութիւնը, որ կը յայտնաբերէ Դաշնակցութեան եկող երիտասարդը, առողջ ընկերականութեան մթնոլորտի ու միջավայրի մը առկայութիւնն է, անկասկած. և ուր գաղափարակից ընկերները այս արժէքային իւրայատուկ և գործուն համակարգին կրողները ըլլալով՝ անոր համա ու հոտն են:

133 տարիներէ ի վեր Դաշնակցութիւնը երիտասարդ մնացած է: Ան եզակի հայկական կազմակերպութիւններէն է, որ ունի երիտասարդական միութիւններ երկու տասնեակէ աւելի երկիրներու մէջ: Երբ կազմակերպութիւն մը գործունեայ է, անոր մէջ երիտասարդութեան հոսքը անպակաս է: Իսկ գործը Դաշնակցութեան մէջ նոյնացած է ծառայութեան հետ:

Աւելին, Դաշնակցութեան ժամանակակից մնալուն

գաղտնիքն անոր ճկունութեան մէջ է, առաւելաբար և բացարձակապէս անոր յեղափոխական տեսակին մէջ, ինչպէս նաև անոր առաջադէմ աշխարհայեացքին և ներքին ժողովրդավարութեան: Այսպիսով՝ հոն շարունակական բնոյթ կը ստանան մարդու աճն ու զարգացումը: Ճիշդ է, որ հաւաքական իտէալն է գրլխատր մտասնեռումը, բայց Դաշնակցութիւնը հաւատացողն է, որ առանց անհատի ազատագրութեան և ինքնակերտման՝ անիրականանալի է հաւաքական որևէ ձգտում:

**Ուստի, Դաշնակցութեան ծրագրի կեանքի կոչման ճանապարհին Հ.Յ.Դ. գաղափարական հիմնաստիւններու միախառն և հաւասարազօր ներգործութիւնը ունի էական նշանակութիւն:**

Ինչո՞ւ վերոնշեալ յատկանիշներով երիտասարդը պիտի միանայ մասնատրաբար Դաշնակցութեան:

**Դաշնակցութիւնը մարդակեդրոն և ժողովրդավար կազմակերպութիւն է՝ միաժամանակ ըլլալով մարդակերտման գաղափարական հոսանք:**

*Այս հասարարումին միս և ոսկոր րալու համար մէջբերենք հերևեալ փասարարկները:*

- Դաշնակցական ըլլալու համար, ըստ կանոնագրի, շարք մը այլ պահանջներու հետ առաջնահերթաբար կը դրուի թեկնածուին բարոյական նկարագրի րէր ըլլալու անհրաժեշտութիւնը: Եզակի է այս պահանջը բաղդարաբար այլ կուսակցութիւններու: Այլ քաղաքական կուսակցութիւններու համար կրնայ այս մէկը բնաւ պահանջ չըլլալ: Ինչո՞ւ դրուած է այս պահանջը Դաշնակցութեան պարագային: Որովհետև բարոյա-



կան նկարագրի տեր երիտասարդ տարրն է, որ առաւելագոյնս ընդունակ է գաղափարականանալու, ո՛չ պարզապէս, այլ ինքնակամ: Գաղափարական անհատն է, որ իր մտքի հորիզոնի ընդլայնումով յեղափոխական մտածելակերպ և գործելաձև որդեգրելու կենսունակութիւնը ձեռք կը բերէ:

- Դաշնակցական նկարագրի յարկանշական գիծերը կառուցուած են հիմնադիր սերունդի և անոր յաջորդող անձնուէր դէմքերու ամրակոտ և վարակիչ անհատական օրինակներուն վրայ: Դաշնակցականի հաւաքական կերպարը կը ներկայանայ բազում բարոյական յարկանիշներով. անկեղծութիւն, քաջութիւն, ընկերասիրութիւն, արդարամտութիւն, կարգապահութիւն և այլն: Իսկ իրաքանչիւրին համար կարելի է յիշել ֆիրայական դիւցազներգութենէն տրիպար մը: Նման բարոյական յարկանիշներ կրող ըլլալու հանգամանքով ալ կը պայմանաւորուի դաշնակցական տեսակի ինքնակարարելագործման ձգտումը՝ ըստ Սարգիս Զէյթլեանի: Եւ քանի որ որևէ անդամ միանգամայն չի կրնար ըլլալ Ռոստոմի պէս կամքի տէր, Նիկոլ Դումանի չափ կարգապահ, Լիզայոնի տղոց չափ անձնուէր ու պատրաստակամ և կամ անանուն, անհամար հերոսներու նման համեստ, ուսրի, ըստ Հրաչ Տաննապետեանի՝ **ամէն օր սուլի դաշնակցականանալուն** մէջ կը կայանայ դաշնակցական մարդու, առաջին հերթին երիտասարդ դաշնակցականի աճումն ու նկարագրային կերտումը քարգացումը:

- Հ.Յ.Դ. կազմակերպութեան հիմնական բջիջը կուսակցական խումբն է, որ կը բաղկանայ նոյն տարածքի մէջ բնակող ընկերներէ, և որուն ժողովները իրաւասու են որոշումներ կայացնելու:

- Դաշնակցականները «ընկեր» դիմելաձևը կը գործածեն ոչ միայն նոյն ընկերվարական կուսակցութեան իբրև անդամ, այլև հաւասարապէս նոյն հա-

մոզմունքին և հաւատամքին ի կատարում՝ սպրելու և գործելու ընտրութիւնը կատարած ըլլալով:

- Դաշնակցութեան սպրելակերպին և մտածելակերպին ուղղութիւն տրող խարխախներն են Դաշնակցութեան գաղափարախօսութիւնն ու անոր ամրակոտ կազմակերպութիւնը:

Վերոնշեալ հանգամանքները կ'ապացուցեն Դաշնակցութեան սոսկ սովորական կուսակցութենէ մը աւելին ըլլալու իրողութիւնը և մարդկային որակի ու քաղաքական մտքի վրայ անոր ունեցած բարձր ազդեցութիւնը:

Այն երիտասարդը, որ սովորական կենցաղայինէն անդին ունի կեանքը դիտելու և զայն ընկալելու լայնախոհ և գաղափարական հորիզոն, ինքնզինք այսպիսի հաւաքականութեան մասնիկ պիտի ուզէր տեսնել, անտարակոյս:

Անհար է Դաշնակցութեան գաղափարներուն հաւատալ, անոնցմով շնչել և գործի լծուիլ և մնալ անփոփոխ: Ծառը, երբ ամուր արմատներ ունի, աճելու հրամայական ունի և բեղմնատուր ըլլալու կոչուած է: Նոյնպէս և Դաշնակցութեան եկող երիտասարդը գաղափարապաշտ իր խառնուածքով կոչուած է արմատ նետելու մեր ժողովուրդին հարազատ և արդարամիտ հաւատամքին վրայ, որուն թարգմանն է Դաշնակցութեան գաղափարաբանութիւնը՝ առաջ տանելով մարդը, ազգը և հետևապէս մարդկային քաղաքակրթութիւնը:

Հաստատենք, առանց վարանումի և յստակօրէն, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը հայ երիտասարդը ազգանուէր գործի մէջ թրծելով՝ ազգային ամբողջական ազատագրումի և պետականակերտման կենսատրման գործը ուժականութեամբ կ'օժտէ՝ նոր նուաճումներու արձանագրումը անխուսափելի դարձնելով: ■

## Հ.Յ.Դ. ուսանողական միութիւններու ծննդոցը

Տիգրան Ճինայաշեան  
Ազգային, հասարակական գործիչ, մանկավարժ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան առաջին ուսանողական միութիւնը ծնունդ առած է 1908 թուականի Ապրիլին Ժնևի մէջ գումարուած Եւրոպայի դաշնակցական ուսանողական խումբերու ներկայացուցիչներու առաջին համագումարին: Նախապէս գոյութիւն ունէին դաշնակցական ուսանողական խումբեր թէ՛ Եւրոպայի և թէ՛ Ռուսաստանի համալսարանական քաղաքներուն մէջ: Հ.Յ.Դ. երկրորդ (1898) և երրորդ (1904) ընդհանուր ժողովներուն խորհրդակցական ձայնի իրատունքով Ռուսաստանի և Եւրոպայի ուսանողական խումբերը մասնակցում են մէկական պատգամատրով: Հակառակ այս իրողութեան՝ այդ խումբերը հաւաքաբար կազմակերպուելով՝ չէին յառաջացուցած դաշնակցական առանձին ուսանողական միութիւններ, այլ գործած էին անջատաբար:

1908-ին կազմաւորուած Հ.Յ.Դ. Եւրոպայի ուսանողական միութիւնը ունի իր նախապատմութիւնը: Հայտնի է, որ ԺԹ դարու հայ իմացական ու գրական զարթոնքին մէջ նշանակալի դեր խաղացած էին Եւրոպայի և Ռուսաստանի համալսարանական ուսանողներուն մէջ ուսում ստացած հայ երիտասարդները: 1890-ական թուականներուն Ռուսաստանի և Եւրոպայի բազմաթիւ համալսարանական քաղաքներուն մէջ գոյութիւն ունէին հայ ուսանողներու համախմբումներ, ինչպէս՝ Փարիզի «Հայ ուսանողաց ակումբը» և «Հայ ուսանողաց միութիւնը», Ժնևի «Հայ անանուն ընկերութիւն փոխադարձ օգնութեան»ը: Շատերը ուսանողական ապաքաղաքական խմբաւորումներ էին, ուրիշներ՝ արդէն դաշնակցական խումբեր: Ռուսաստանի մէջ ուսանողական կոմիտէներ կային Մոսկուա, Պետերբուրգ և Խարկով քաղաքներուն մէջ: Եւրոպայի մէջ կը գործէր Պերլինի «Մոլեքիլ» կոմիտէն, Փարիզի ուսանողական կոմիտէն և ատլի ուշ՝ 1900ին կազմուած, Ժնևի «Ջանք» խումբը:


Ռուսաստանի ուսանողական խմբաւորումները հակառակ իրենց ցանկութեան՝ պիտի չկարենան քաղաքական պայմաններու բերումով համախմբուիլ և ուսանողական միացեալ կազմակերպութեան վերածուիլ: Եւրոպայի մէջ, համեմատաբար ատլի ազատ պայմաններու բերումով, շուրջ 15 քաղաքներու մէջ գործող ուսանողական խումբերը Լայպցիլի (Գերմանիա) «Հայ-ճեմարանական ընկերութեան» նախաձեռնութեամբ 1897ի Ապրիլին Հայդելպերքի մէջ կը հիմնեն զուտ ուսանողական, ոչ քաղաքական «Եւրոպայի հայ ուսանողական միութիւնը»: Առաջին համագումարը կը վաւերացնէ միութեան կանոնագիրը,



որուն նպատակ բաժինը համեստօրէն կ'արձանագրէ. «Բարոյական և մտաւոր հաղորդակցութեան մէջ դնել հայ ուսանողական խմբերը և ուսանողները, սոցա՝ իրար հետ անձնական ծանօթութիւններ անելուն նպաստել և ընդհանուր իղէալներ զարթեցնել ուսանողութեան մէջ»: Ըստ կանոնագրին՝ միութիւնը կը կառավարուի «կարգադիր մասնաժողովի մը կողմէ, որ կը գործէ տարեկան համագումարներու միջև՝ հանդիսանալով կապ խումբերու միջև շրջաբերականներու միջոցով»: Կարգադիր մասնաժողովը պարտի հրապարակել իւրաքանչիւր կիսամեակին «ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒՆՎԵՐՍԻՏԵՏԻ» խորագրով պրակ մը, որ պէտք է պարունակէ տեղեկութիւններ ուսանողական խումբերու մասին, ուսանողներու ցուցակներ, համագումարներու արձանագրութիւնները և կարգադիր մասնաժողովի հաշուետուութիւնը: 1897-98 և 1898-99 տարիներու «Տեղեկագիր»էն կիմանանք, որ Եւրոպայի (Գերմանիա, Ֆրանսա, Ջուիցերիա, Իտալիա, Պելճիքա) հայ ուսանողներու թիւը 230 է, և ասոնց հազիւ կէսը կ'անդամակցի միութեան: Ուշագրաւ է, որ Կովկասէն եկած ուսանողներուն մէջ նկատառելի թիւ կը կազմեն շուշեցիները: Այլ տեղեկագիրներ չեն հրապարակուած:

Եւրոպայի հայ ուսանողական միութիւնը պիտի գումարէ յաջորդական վեց համագումարներ 1897ին, 1899ին, 1900ին, 1901ին, 1902ին և 1905ին: 1903ին և 1904ին կարելի չէ եղած համագումար ունենալ: Համագումարները, որոնք կը տևէին 5 կամ 6 օր, կը գումարեն օրական երկու նիստ: Այս նիստերու ընթացքին





բացի կազմակերպական հարցերու քննարկումներէն՝ կը կարդացուին դասախոսութիւններ, որոնց կը յաջորդեն յաճախ տաք վիճաբանութիւններ:

Ժամանակի ընթացքին միութեան հետաքրքրութիւնները հոլովոյթ կ'ապրին ու հետզհետէ կ'ազգայնանան: 1900ին գումարուած երրորդ համագումարին կանոնադրութիւնը կը վերանշակուի, և նպատակը կը վերախմբագրուի. «1. Բարոյական կապ հաստատել Եւրոպայի ուսանողների և ուսանողական խմբերի մէջ: 2. Նպաստել նրանց ծանօթութեանը հայոց կեանքի և մասնատրապէս հայերի քաղաքական կացութեան հետ: 3. Ձգտել ծանօթացնել հայերը եւրոպացիներին: 4. Հրատարակել Հայոց հարցին վերաբերեալ և նոյն հարցին նպաստող ինքնուրոյն և թարգմանական գրքեր հայերէնով, նոյնպէս և օտար լեզուներով, եթէ կարիք լինի:

Ծանօթութիւն: Միութիւնը կարող է նիւթապէս օգնել Եւրոպայում գոյութիւն ունեցող հայկական ուրիշ հիմնարկութիւններին նոյն նպատակին ծառայող հրատարակութիւններ անելու համար»:

Այս նպատակները իրագործելու համար կարգադիր յանձնաժողովին կողքին կը կազմուի «Լիազօր կոմիտէ» մը, որ պարտականութիւն ունի Հայ դա-

տին քարոզչութիւնը ընելու դասախօսութիւններով և հրատարակութիւններով: Յատկապէս կ'որոշուի հրատարակել ժողովածու մը՝ եւրոպացիներուն ծանօթացնելու համար հայ մշակոյթը և Հայկական հարցը, որ այն ժամանակ Օսմանեան կայսրութեան հայերուն պայքարն է: Համագումարներուն մասնակիցներուն և լիազօր կոմիտէին անդամակցողներուն մէջ կը հանդիպինք մեր ազգային, քաղաքական և մշակութային կեանքի ապագայի մեծ դէմքերուն՝ Մանուկ Աբեղեան, Յակոբ Մանանդեան, Կոմիտաս վարդապետ, Լևոն Շանթ, Աւետիս Ահարոնեան, Արմէն Գարօ, Միքայէլ Վարանդեան, Ստեփան Շահումեան, Արտաշէս Աբեղյան, Է. Ակնունի, Համօ Օհանջանեան և ուրիշներ:

Եւրոպայի հայ ուսանողական միութիւնը հետզհետէ կը ծավալէ իր գործունէութիւնը և տիրական ներկայութիւն կը հաստատէ եւրոպական ուստաններուն մէջ: Միութեան ղեկը կը ստանձնեն առաւելաբար դաշնակցական ուսանողները (մասամբ նաև՝ հրնչակեաններ), որոնք Հայկական հարցի ուղղութեամբ քարոզչական աշխատանքը կը տանին՝ «Դրօշակի» (Հ.Յ. Դաշնակցութեան պաշտօնական օրգանի) խմբագրութեան հետ համակարգումով: 1905ին՝ վեցերորդ համագումարի նախօրեակին, երբ միութեան ծաղկումը հասած էր իր գագաթնակետին, հրապարակ կը նետուի միութիւնը կազմալուծելու առաջարկը: Փոքրամասնութիւն կազմող սոցիալ-դեմոկրատ ուսանողները համագումարի եկած էին միութիւնը կազմալուծելու յստակ առաջադրանքով: Համագումարի 14-րդ նիստին սոցիալ-դեմոկրատ Բախշի Իշխանեան կը յայտնէ, որ ուսանողական խումբերուն մէջ արդէն գոյութիւն ունին երկու որոշ կուսակցութիւններ, որոնք գործունէութեան ժամանակ պիտի դիմեն տարբեր ճանապարհներու և գործեն իրարու հակառակ. ժամանակն է, որ կազմալուծուի ուսանողական միութիւնը, մնան միայն կուսակցական միութիւններ: Առաջարկը հանգամանօրէն կը քննուի յաջորդ նիստին: Ներկայացուած որոշման բանաձևը՝ «Ժողովը լսելով Պերլինի ուսանողութեան մի մասի առաջարկը, միութեան գոյութեան խնդիրը՝ անցաւ հերթական հարցերին» կը ստանայ 34 ձայն, 17 դէմ: Սոցիալ-դեմոկրատ պատգամաւորները՝ 7 հոգի՝ Բախշի Իշխանեանի գլխավորութեամբ կը լքեն դահլիճը և ապրիլ 8ի թուակիր «Մանիֆեստով» մը կը յայտարարեն, որ «պրոլետարական-դասակարգային շահերու հայեցակէտով» պիտի չկարենան գործել «այն տարրերուն հետ, որոնք իրենց հասարակական դաւանանքով և գործնական ձգտումներով կանգնած են ազգայնական (սացիոնալիստական) շահերի հայեցակէտի վրայ»:

Հակառակ համագումարը լքողներու փոքր թիւին, հակառակ մնացող մեծամասնութեան կողմէ համա-



Փրակա համալսարանի դաշնակցական ուսանողներ, 1925

գումարը շարունակելու և իր ասարտին հասցնելու կամքին՝ Երոպայի հայ ուսանողական միությունը լուրջ հարուած ստացաւ: Աշխատանքները թուլացան, ուսանողական խումբերու միջև կապերը խզուեցան, և կարելի չեղավ հերթական համագումարը կայացնել, մինչև որ 1910 Յունուար 2-էն 8 կարելի եղաւ Լօզանի մէջ գումարել 7-րդ համագումարը, որ պաշտօնապէս լուծարուած յայտարարեց միութիւնը:

**Երոպայի Հ.Յ.Դ. ուսանողական միութիւն**

Տեսանք արդէն 1890ական թուականներուն գոյութիւն ունէին դաշնակցական ուսանողական միութիւններ, խումբեր և կոմիտէներ թէ՛ ռուսական ուսանաներու (Պետերբուրգ, Մոսկուա և Խարկով) և թէ՛ երոպական համալսարանական քաղաքաներու մէջ (Փարիզ, Նանտ, Պերլին, Ժնև և այլն): Վերջինները, մաս կազմելով հանդերձ Երոպայի հայ ուսանողական միութեան, կը մասնակցէին Դաշնակցութեան գործունէութեան: Մինչ Բ և Գ ընդհանուր ժողովներուն Ռուսաստանի և Երոպայի դաշնակցական ուսանողները հրաւիրուած էին մէկական խորհրդակցական ձայնով, 1907ի Վիեննայի Դ ընդհանուր ժողովին անոնք կը հրաւիրուին վճռական ձայնի իրատուքով, ինչը կը վկայէ ուսանողական դաշնակցական խում-

բերու ծաւալման և ուժեղացման մասին: Դ ընդհանուր ժողովէն ետք Արևմտեան Բիւրոն կ'առաջարկէ Երոպայի դաշնակցական ուսանողներուն խորհրդակցութիւն մը անցկացնել՝ որոշելու, թէ ինչպէս կարող են ուսանողները օգտակար ըլլալ կազմակերպութեան և, թէ երբ ու ինչպէ՞ս կազմակերպել դաշնակցական ուսանողութեան համագումար մը: Պարտականութիւն կը տրուի Արշակ Իսահակեանին (Ջամալեան)՝ այցելելու ուսանողական քաղաքներու դաշնակցական խումբերուն՝ նախապատրաստելու համար Արևմտեան Բիւրոյի որոշման գործադրութիւնը: Արշակ Իսահակեանի զեկուցման հիման վրայ Արևմտեան Բիւրոն կ'որոշէ առաջարկել Երոպայի դաշնակցական ուսանողութեան համագումար գումարել: Համագումարի հրաւիրման նախաձեռնութիւնը կը վստահուի Պերլինի դաշնակցական ուսանողական խմբակին, որ կը կազմէ քառանդամ կազմակերպիչ կոմիտէ մը և շրջաբերականներով հրաւերներ կուղարկէ դաշնակցական խումբերուն: Համագումարը տեղի կ'ունենայ Ժնևի մէջ 3էն 13 Ապրիլ 1908ին: Համագումարը հիմքերը կը դնէ Երոպայի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ուսանողական միութեան և կը մշակէ անոր կանոնագիրը:

Կանոնագրի նպատակ բաժինը (առաջին յօդուած) կը ճշդէ. «Երոպայի դաշնակցական ուսանողների միութեան նպատակն է սերտ կապ հաստատելով դաշնակցական ուսանողական խմբերի և անհատների միջև՝

ա) Գրչով ու խօսքով լուսաբանել և տարածել Հ.Յ.Դ. սկզբունքները:

բ) Նպաստել Կովկասի, Տաճկաստանի և Պարսկաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական պայմանների ուսումնասիրութեան:

գ) Հետևել Երոպայի զանազան երկրներում սոցիալիստական տարբեր ուղղութիւններին և արտասայտել այդ մեր կուսակցութեան օրգաններում»:

Միութիւնը կը ղեկավարուի գործադիր մարմնի կողմէ, որ իւրաքանչիւր համագումարին կը ընտրուի մեկ տարուան համար: Երոպայի դաշնակցական ուսանողական միութեան բազմերես գործունէութիւնը սկիզբ կ'առնէ 1908ին և կը շարունակուի մինչև 1914՝ Առաջին աշխարհամարտի բռնկումը: Միութիւնը իր գործունէութեան վեց տարիներուն ընթացքին գումարած է հինգ համագումար, վերջինը՝ 1913ին: 1909էն սկսելով՝ հրատարակում է «Ուսանող» պարբերաթերթը: «Ուսանող» պարբերաթերթի ութ համարները (ընդհանուր 1012 էջ) հրատարակուած են Փարիզի (թիւ 1,2 և 5), Ժնևի (թիւ 3, 4, 6 և 8) և Պոլսոյ (թիւ 7) մէջ:



Միությունը կարևոր նպաստ բերած է Հայ դատի եւրոպական քարոզչության և հայ յեղափոխական մտքի զարգացման գործին:

Ուսանողական դաշնակցական կազմակերպություններուն գործունեության և հետաքրքրության առանցքը Արևմտեան Հայաստանն է կամ, ինչպէս իրենք կը կոչեն, Տաճկահայաստանը: Այնտեղ է, որ տեղի կ'ունենան ինքնապաշտպանական կռիվները: Ռուսահայաստանի մէջ, երբ հակահայ հալածանքները կը բազմանան, ինչպէս՝ հայկական դպրոցներու փակումը, հայ եկեղեցոյ ինչքերու բռնագրաւումը, հայ-թաթարական բախումներու հրահրումը, Դաշնակցութեան ղեկավարներու ձերբակալութիւնը և դատը, Արևելեան Հայաստանը ևս հետաքրքրութեան առարկայ դարձնելու կարիքը կը շեշտուի: Միւս կողմէ՝ ռուսական յեղափոխական շարժումներու ծառայումը մեծամասնութեամբ ընկերվարական դաւանանքի հետևող հայ ուսանողութեան մօտ կը յառաջացնէ Կովկասի հայութեան ընկերային և տնտեսական հարցերով զբաղելու անհրաժեշտութիւնը: Յայտնենք, որ նոյնիսկ դաշնակցական շարքերուն մէջ մտածողներ կային, որ երկու տարբեր կուսակցութիւններ պետք է կազմուին. մէկը առաջ տանելու համար Արևմտեան Հայաստանի ազատագրական պայքարը, միւսը՝ Ռուսահայաստանի ընկերային ու տնտեսական պայքարը: Երկու «Դաշնակցութիւններուն» միջև կը հաստատուին գործակցական սերտ կապեր: Դ ընդհանուր ժողովը «Կովկասեան նախագիծի» հիման վրայ վերամշակելով Դաշնակցութեան ծրագիրը՝ պիտի յաջողի այս երկու ուղղութիւններուն համադրումը կատարել: Օսմանեան Սահմանադրու-

թեան (1908) հռչակումէն ետք Դաշնակցութեան գործունեութիւնը կ'օրինականացուի: Դաշնակցական ուսանողութեան հետաքրքրութիւններու և աշխատանքի ոճը փոփոխութիւն կը կրէ և կ'ընդգրկէ Իթաթիհատի ու Դաշնակցութեան համագործակցութեան, ապա համագործակցութեան խզման հետ առնչուած հարցերը: Գործադիր մարմնի շրջաբերականներէն մէկը կը թելադրէ, որ խումբերու մէջ կուսակցական աշխարհահայեացքի հետ կապուած հարցերը և կուսակցական գործնական կեանքի երևոյթները ամենաբնական մասը պիտի կազմեն խմբական դասախոսութիւններու, զրոյցներու և «Ուսանող» պարբերականի:

1913 թուականին Եվրոպայի Հ.Յ.Դ. ուսանողական միութեան գործունեութիւնը ընթացիկ քարոզչական աշխատանքներուն ու «Ուսանողի» հրատարակութեան համար թափուող ջանքերուն կողքին պիտի ընդգրկէ յատկապէս Թուրքիոյ հայկական նահանգներուն մէջ նախատեսուող բարենորոգումներու խընդիրը և հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան կազմակերպումը: Թէ՛ սուլթանական վարչակարգը և թէ՛ սահմանադրական Թուրքիան դժկամութիւն ցոյց տուած էին՝ կատարելու Պերլինի դաշնագրով խոստացուած բարենորոգումները: Այդ պատճառով անգամ մը ևս եւրոպական պետութիւններու կողմէ արծարծուեցաւ Հայկական հարցին լուծում ապահովելու անհրաժեշտութիւնը: Թուրքիա հակազդելով արտաքին միջամտութեան՝ ձեռնարկեց հակահայ խռովութիւններու հրահրումին: Կիլիկեան ջարդերու նմանողութեամբ նոր աղէտի մը սպառնալիքը հայութիւնը մղեց ձեռնարկելու ինքնապաշտպանութեան: Դաշնակցական ուսանողները փափագ յայտնեցին քարոզչութեամբ, դրամահաւաքով, զէնքի հայթայթումով մասնակցիլ հայ ժողովուրդի ապահովութեան առնչուած ճիգերուն: Այս մտահոգութիւնները արտայայտուած կը տեսնենք վերահաս վտանգի մը կանխագուշակութեամբ գործադիր մարմնի կարգ մը շրջաբերական կոչերուն մէջ:

Հ.Յ.Դ. Եւրոպայի ուսանողական միութեան վերջին, հինգերորդ համագումարը տեղի ունեցաւ Փարիզի մէջ 1913 թուականի Դեկտեմբեր 25 էն 30ին: Օրակարգի վրայ էին վերը մատնանշուած հարցերը: Քննութեան առարկայ եղան նաև տարբեր միջավայրերու մէջ գործող դաշնակցական ուսանողական խումբերը:

Համաշխարհային առաջին պատերազմի բռնկումը պիտի վերջ դնէր Եւրոպայի Հ.Յ.Դ. ուսանողական միութեան գոյութեան: Ամէն պարագայի, այս միութեան կը պատկանի դաշնակցական ուսանողութեան կազմակերպուած կառոյց մը ստեղծած ըլլալու պատիւը:

**Ռուսաստանի դաշնակցական ուսանողության պարագան**

Ինչպէս տեսանք, Ռուսաստանի համալսարանական քաղաքներէն շատերուն մէջ գոյութիւն ունէին դաշնակցական խումբեր և կոմիտէութիւններ: Ուսանողները համախմբելու առաջին փորձ մը կայացած է 1899ի Յունուարին, երբ Պետերբուրգի մէջ գումարուած է Ռուսաստանի դաշնակցական ուսանողութեան առաջին համաժողովը: Համաժողովը ունեցած է 12 նիստեր և զբաղած առաւելաբար տեսական հարցերով, որոնց մէջ կարևոր տեղ գրուած է Տաճկահայաստանի կացութիւնը ուսումնասիրելու անհրաժեշտութիւնը: Համաժողովը կազմակերպական հարց չէ քննարկած և ցրուած է՝ առանց միասնական կառոյց մը ստեղծելու:

Երոպայի Հ.Յ.Դ. ուսանողական միութեան ուղղուած նամակէ մը (9 Դեկտեմբեր 1913) կ'իմանանք, որ վերջինին նմանողութեամբ դաշնակցական ուսանողական միութիւն մը կազմելու նպատակով Պետերբուրգի մէջ կազմուած է նախաձեռնող մարմին մը: Ռուսաստանի դաշնակցական ուսանողներու համագումարը նախատեսուած էր իրականացնել 1914 թուականի Փետրուարի վերջերուն: Համագումարը ճշդուած ժամանակին կարելի չէ եղած գումարել, իսկ անելի ուշ արդէն կը մտածենք պատերազմի թոհուրին մէջ հնարավոր չէ եղած: Դժբախտաբար, ռուսահայ մեծաթիւ ուսանողութիւնը չունեցավ իր միութիւնը:

**Այլ ուսանողական միութիւններ**

Ծանօթ է, որ 1904ին Սիմոն Զաւարեան, որ անդամ էր Կիլիկիոյ պատասխանատու մարմնին, Պէյրութ կատարած այցելութեան ընթացքին տեղոյն երկու համալսարաններու հայ ուսանողներէն կազմած է դաշնակցական խումբ մը, որ յետագային դարձաւ Սիմոն Զավարեանի անունը կրող և ցարդ գոյութիւն ունեցող ուսանողական միութիւնը: Այս ուսանողական խումբի գործունէութիւնը կ'ընթանար լեռնավայրի (Կիլիկիա) կեդրոնական կոմիտէին շրջագիծէն ներս:

Նոյնն է պարագան Հ.Յ.Դ. Դամասկոսի ենթակոմիտէութեան, որ կազմուած էր առաւելաբար Դամասկոսի բժշկական համալսարանի ուսանողներէն:

Վերջապէս 1911ին Պոլսոյ մէջ հիմնուած էր Հ.Յ.Դ. ուսանողական միութիւն մը, որ 1912ին սկսաւ հրատարակել «Երկունք» պարբերաթերթը: Պոլսոյ Հ.Յ.Դ. ուսանողական միութեան մասին յաւելեալ տեղեկութիւններ կը պակսին:

Ուսանողական այս խմբաւորումները թղթակցական յարաբերութեան մէջ եղած են Երոպայի դաշնակցական ուսանողական միութեան հետ յատկապէս «Ուսանող» պարբերաթերթի միջոցով: ■



## Ամբողջական յանձնառություն

Սարգիս Զեյթուն

Անհատական, թե՛ ընկերային, առաել ևս ազգային կեանքի մեջ ամեն նպատակադրում, ամեն դիրքորոշում կամ վարքագիծ, ամեն արևելում կամ պատկանելիություն կը բխի անհատական կամ հասարակական պատասխանատուության գիտակցութենէն և համաստիճան պատասխանատուութեանց ու պարտաւորութեանց յանձնառութիւն կ'ենթադրէ:

Համայնական հաստք, ընկերային դասանանք կամ ազգային տեսլական, անհատական, թե՛ հասարակական պատասխանատուութիւն. այս բոլորը տեսութիւն են լոկ, հոգեշահ գրոյց միայն, եթէ մեզի կը պակսի մասնական, թե՛ ընդհանրական մակարդակի վրայ ամբողջական ու ներգործոն յանձնառութիւնը՝ իբրև գործնական արտայայտութիւնը, հարազատ ցոյացումն ու իրացումը անհատական և հասարակական մեր պատասխանատուութեան լիարին գիտակցութեան:

Առանց յանձնառութեան՝ պատասխանատուութեան ամեն գիտակցութիւն դատապարտուած է անլուծեան:

Առանց ներգործոն ու բոլորանուէր յանձնառութեան՝ անհնար է ամեն դերակատարութիւն, ըլլայ ընկերային, ըլլայ կուսակցական, թե՛ ազգային կեանքի ծիրին մէջ:

Յանձնառութիւնն է նախապայմանը դերակատարութեան: Դերակատար են և դերակատար կրնան ըլլալ ընդհանրապէս միայն յանձնառոն անհատները, յանձնառոն կազմակերպութիւնները, յանձնառոն կուսակցութիւնները, ազգերը:

Յանձնառութեամբ է, որ կեանքի կը վերածուին անհատական, թե՛ հասարակական իտէալները, յանձնառութեամբ է, որ իրենց կոչումին կամ առաքելութեան կը ծառայեն ընկերութիւններն ընդհանրապէս և ընկերային, թե՛ քաղաքական կազմակերպութիւնները, պետութիւնները, ազգային ընդհանրութիւնները՝ մասնաւորաբար:

Հոս ևս հասարակական յանձնառութիւնը հանրագումարն է և հարազատ ցոյացումը կը կազմէ անհատական մեր յանձնառութեանց:

Որքան մեծ ըլլայ թիւը յանձնառոն անհատներուն, այնքան աւելի գորանալու, զարգանալու և իր ընդհանրական իտէալներու ու առաքելութեան ամբողջականօրէն ծառայելու ընդունակ կը դառնայ ընկերութիւնն ընդհանրապէս:

Որքան ալ մեծ ըլլայ թիւը յանձնառոն շարքայիներուն և յանձնառոն ազգայիններուն, այնքան աւելի կոտ ու կենսունակ կը դառնան կուսակցութիւնները, այնքան աւելի գորեղ կ'ըլլան և զարգանալու ու յառաջդիմելու հնարաւորութիւն ձեռք կը բերեն ազգերը ընդհանրական իրենց կոչումին ու տեսլականին ծառայելու ճամբուն վրայ:

Յանձնառութիւնն է չափանիշը գործնական իր



արտայայտութեան մէջ, մեր հաստքին, մեր գաղափարապաշտութեան, ընկերային ու քաղաքական հասունութեան, անհատական ու հասարակական մեր պատասխանատուութեան գիտակցութեան մակարդակին:

Որքան խոր է մեր հաստքը, որքան ներհուն է մեր գաղափարապաշտութիւնը, որքան լայնածիր են ազգային և քաղաքական մեր գիտակցութիւնն ու հասունութիւնը, այնքան մեծ ու ներգործոն է նաև մեր յանձնառութիւնը անհատական ու հանրային կեանքի բոլոր հանգրուաններուն մէջ և բոլոր մակարդակներուն վրայ:

Իբրև ընկերային կեանքի զարգացման ու ամրապնդման անխուսափելի հրամայական՝ անհատին ու հասարականութեանց փոխադարձաբար զիրար լրացնող ու զօրացնող յանձնառութիւնը նախապայմանն է, այո՛, որով գործնական արժէք կը ստանայ և կենսագործման մէջ կը մտնէ գաղափարական ու քաղաքական ամեն արևելում, ամեն վարքագիծ և կամաւոր ամեն պատկանելիութիւն:

Անհատական ու հասարակական համակարգեալ յանձնառութիւնը էական նշանակութիւն ունի բոլոր ժողովուրդներուն, ուստի նաև հայ ժողովուրդի կեանքին, գոյատևման և մեր ընդհանրական իտէալներու իրականացման մէջ:

Արդ, հայության պահպանում ու զորացում, Հայ Դատի հետապնդում, ամբողջական հայության համախմբում հայրենի սեփական հողերում վրայ և միացնել հայրենիքի կերտում ազգային պետականության հովանիին տակ. ասոնք միայն համազգային իտեղներ չեն, որ մեր գոյության իմաստը կը կազմեն, այլև անհատական և հաւաքական մեր յանձնառությունն են էսպէս:

Համազգային այս իտեղներու կենսագործման յանձնառու են բոլոր հայերը, ընկերային, ազգային, քաղաքական բոլոր կազմակերպությունները, բոլոր հաստատությունները, բովանդակ ազգը ինք՝ իր բոլոր խաւերով և բոլոր սերունդներով:

Յանձնառու են, պարտաւոր են յանձնառու ըլլալու՝ ստանձնելու համար իրենց բաժին մասնակցութիւնը, ծառայութիւնը, գործակցութիւնը կարելի բոլոր միջոցներով, հնարաւոր բոլոր մարզերուն մէջ և տրամադրելի բոլոր մակարդակներուն վրայ:

Ամէն հայ, ազգային-քաղաքական ամէն կազմակերպութիւն յանձնառու է, պարտաւոր է ըլլալու յարատև պայքարի, յարատև գոհաբերութեան, անսակարկ ու ամբողջական նուիրումի՝ համադրեալ ճիգերով և կամաւոր ու ուժական մասնակցութեամբ:

Այս մեկնակէտով ալ չի բաւեր միայն հայ ըլլալ, իբրև կրատրական ներկայութիւն, այլև անհրաժեշտ է հայօրէն ապրիլ և հայօրէն գործել՝ իբրև գիտակից, պարտաճանաչ ու գործօն անդամը ազգային հաւաքականութեան, անոր ներքին կազմակերպական այս կամ այն կառոյցին ու միաւորին:

Էականը ամբողջական յանձնառութեան ճամբով մասնակցութիւնն է հաւաքական կեանքին, ընդհանրական պայքարին, մեր ազգային գոյապայքարին լծակը կազմող կազմակերպական կառոյցներու ուժեղացման ու զարգացման, որպէսզի, իբրև անհատական ճիգերու համադրութեան ու ներդաշնակութեան ազդակ, ամբողջականօրէն ծառայեն իրենց դերին ու առաքելութեան, ընդհանուրի բարիքին և ազգային մեր ճակատագրի վերափոխման ի խնդիր:

Յանձնառութեան մը մասնակցութեան ճամբուն վրայ հայ անհատը պարտաւոր է պահանջկոտ ու պահանջատէր ըլլալու ամէնէն առաջ ինքն իրմէ՝ իր առաւելագոյնը տալու նախանձախնդրութեամբ, և սպայ միայն ուրիշներէն, ըլլան անհատ, թէ կազմակերպութիւն: Միևնոյն սկզբունքով մեր ազգային-քաղաքական և այլ կազմակերպութիւնները ևս, իբրև մեր ազգային-հաւաքական կեանքի առանցքը, պարտաւոր են նախանձախնդիր ըլլալ ամէնէն առաջ իրենք իրենց նկատմամբ, տևաբար գտնուիլ իրենց կոչումին բարձրութեան վրայ, հաւատք, վստահութիւն և եռանդ ներշնչելու համար հայ անհատին, հայ շրջապատին՝ միշտ և տևաբար, ընդհանրական ու միասնական ճիգերով, առաւելագոյնը տալու մտահոգութեամբ:

Մանաւանդ արտերկրի մեր պայմաններուն մէջ մեզի պէս ցիրուցան ժողովուրդի մը համար էական կարևորութիւն կը ներկայացնեն փոխադարձ այս պահանջատիրութիւնն ու նախանձախնդրութիւնը, հաւաքական մեր պատասխանատուութեանց մեր

յանձնառութեան և ընդհանրապէս մեր պայքարին մասնակցութեան ուղղութեամբ:

Ուր որ ալ գտնուինք, ինչ պայմաններու մէջ ալ ապրինք, մեր փրկութիւնը մեր ազգային յանձնառութեանց և մեր հաւաքական կեանքին ու պայքարին մասնակցութեան մէջ է՝ հնարաւոր բոլոր միջոցներով և ի գին ժամանակի ու տարածութեանց յարուցած բոլոր դժուարութեանց յաղթահարման:


Համախմբուիլ մեր ազգային ու քաղաքական կազմակերպութեանց շուրջ, զօրացնել ու ամրապնդել մեր ազգային կառոյցները, տևական շփման ու հաղորդակցութեան մէջ ըլլալ մեր հաւաքական կեանքին հետ, սնանիլ հայրենական արժէքներով և գործօն մասնակցութիւն բերել մեր ընդհանրական պայքարին, ազգային-ազատագրական մեր դատի հետապնդման բոլոր ճակատներուն վրայ՝ յարատև նուիրումով և հնարաւոր բոլոր զոհողութիւններով:

Ամբողջական յանձնառութեամբ, բոլորանուէր մասնակցութեամբ և գոհաբերութեան աննահանջ ոգիով: ■

**ՍԱՐԳԻՍ ԶԷՅԹԼԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՐՏԻԿԸ**  
(«Դրօշակի» մէջ հրատարակուած խմբագրականներ եւ յոդուածներ) Պետրոյ 1993 Թ.



## Հ.Յ.Դ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՒ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԹԻԻԵՐ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԵՆՔ ԵՆՔ  
ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ



ԴԴՇԱԿ